546

20
4-14

1897

2001

0

ցկ 25

# ԿՐՕՆ ՄԱՆԿԱՆՑ
# ԵՒ
# ՀԱՅ ՏՂԱՅՈՑ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ՀԱՒԱՔԵԱԼ

ՅՕԳՆՈՒԹԻՒՆ ԾՆՈՂԱՑ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ՅԱՆԳԼԻԱԿԱՆԷ Ի ՀԱՅ

Ա. Ե. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

«Նորածին մանկանց պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որ անով մեծնաք։» Ա Պետ. Բ. 2.

«Յիսուս ըսաւ, Զիս կը սիրե՞ս. Արածէ իմ գառնուկներս։» Յովհ. ԻԱ. 15.

معارف عمومیه نظارت جلیلەسنك ٤ محرم ۳۱۰ و ۱٦ تموز
۳۰۸ تاریخلو و ٥۷۷ نومرولی رخصتنامەسیله نشر اولنمشدر

مصارفی آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنەرق طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՕՅԱՃԵԱՆ

1897

# ԿԱԹՆ ՄԱՆԿԱՆՑ
## ԵՒ
# ՀԱՑ ՏՂԱՅՈՑ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ՀԱՒԱՔԵԱԼ

ՅՕԳՆՈՒԹԻՒՆ ԾՆՈՂԱՑ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ԲԱՆԳՂԻԱԿԱՆԷ Ի ՀԱՅ

Ա. Ե. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

*«Նորածին մանկանց պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որ անով մեծնաք։»* Ա Պետ. Բ. 2։

*«Յիսուս ըսաւ, Զիս կը սիրե՞ս։ Արածէ իմ գառնուկներս։»* Յովհ. ԻԱ. 15։

معارف عموميه نظارت جليله سنك ٤ محرم ٣١٠ و ١٦ تموز
٣٠٨ تاريخلو و ٥٧٧ نومرولى رخصتنامه سيله نشر اولنمشدر

مصارف آمريقان مسيونر شركتى طرفندن تسويه اولنه رق طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Ց. ՊՕՅԱՃԵԱՆ

1897

26929-Ա. 3

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5882-57

# ԿԱԹՆ ՄԱՆԿԱՆՑ

## ՍԲ. ԳՐՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

### ՎԱՍՆ ՏՂԱՅՈՑ

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԿԱՄ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Ո՞ւր կ՚ուսանինք թէ ո՛վ ստեղծեց մեզ և ամէն բան։

Աստուածաշունչին կամ Սուրբ Գրոց մէջ։

Ի՞նչ է Աստուածաշունչը։

Աստուծոյ խօսքն է։

Ո՞վ գրեց Աստուածաշունչը։

Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած։ Բ Պետ. Ա. 21, Բ Տիմ. Գ. 16։

Ի՞նչ կ՚ուսուցանէ մեզի Աստուածաշունչը Աստուծոյ վրայ։

Կ՚ուսուցանէ մեզ թէ ի՛նչ է Աստուած և ի՛նչ կ՚ուզէ որ ընենք։ Բ Օր. ԼԱ. 12։

Ի՞նչ կ՚ուսուցանէ մեզի Աստուածաշունչը բուն մեր վրայ։

Կը ցուցնէ մեզ թէ ի՛նչ ենք և ի՛նչպէս կըրնանք փրկուիլ։ Յովհ. Գ. 16։

Աստուածաշունչը ո՞վ կը յայտնէ իբրեւ մեր Փրկիչը։

Տէր Յիսուս Քրիստոսը։ Բ Տիմ. Ա. 10, Ղուկ. ԻԴ. 27։

Աստուածաշո՞ւնչն է մեր հաւատոյ եւ վարուց մի միայն կանոնը։

Այո։ Եսա. Ը. 20, Մատ. ԺԵ. 9։

---

## ԱՍՏՈՒԱԾ

Ո՞վ է Աստուած։

Մեր երկնաւոր Հայրը։ Մատ. Զ. 9, Բ Կոր. Զ. 18։

Ի՞նչ է Աստուած։

Աստուած Հոգի է։ Յովհ. Դ. 24։

Ո՞ւր է Աստուած։

Աստուած ամէն տեղ է։ Երեմ. ԻԳ. 23, 24, Սաղ. ՃԼԹ. 8, 9։

Կրնա՞ս տեսնել զԱստուած։

Ոչ. չեմ կրնար տեսնել զԱստուած. բայց Նա կը տեսնէ զիս միշտ։ Սաղ. ՃԼԹ. 16։

Աստուած գիտէ՞ ամէն բան։

Այո. բան մը չկրնար ծածկուիլ Աստուծմէ։ Սաղ. ՃԼԹ. 4, 7, 12։

Աստուած կրնա՞յ ընել ամէն բան։

Այո. ամէն բան կարելի է անոր։ Մատ. ԺԹ. 26։



Աստուած սկիզբ ունեցա՞ծ է։

Ոչ. Նա ի յաւիտենից է։

Աստուած վախճան պիտի ունենա՞յ։

Ոչ. Նա է յաւիտենից մինչեւ յաւիտեանս։ Սաղ. Ղ. 2, Եբր. ԺԳ. 8։

Աստուծոյ բնաւորութիւնն ի՞նչ է։

Նա է սուրբ, արդար եւ բարի։ Սաղ. ՂԹ. 5, Ա Յովհ. Ա. 9։

Նաեւ ողորմած չէ՞ Աստուած։

Այո. Նա ողորմած է եւ բարերար։ Ել. ԼԴ. 6։

Սուրբ Գրոց ո՞ր մէկ խօսքը կը ցուցնէ Աստուծոյ բնաւորութիւնը։

Աստուած Սէր է։ Ա Յովհ. Դ. 16։

Աստուած կը փոփոխի՞։

Ոչ։ Յակ. Ա. 17, Մաղ. Գ. 6։

---

## ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Մէկ Աստուծմէ աւելի Աստուած կա՞յ։

Ոչ. միայն մէկ Աստուած կայ։ Բ Օր. Զ. 4, Ա Տիմ. Բ. 5։

Ինչո՞ւ ուրեմն Երրորդութիւն կ'ըսուի։

Քանզի երեք անձեր կան Աստուածութեան մէջ։ Մատ. ԻԸ. 19, Ա Յովհ. Ե. 7, Յովհ. Ժ. 30։

Որո՞նք են Աստուածութեան երեք անձերը։

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին։

Այս երեք անձերն երեք Աստուածներ չե՞ն։

Ոչ. երեքը մէկ Աստուած են։

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ո՞վ ստեղծեց մեզ։

Աստուած։

Ուրիշ ի՞նչ ստեղծեց Աստուած։

Աստուած ստեղծեց ամէն բան։

Ըսէ Աստուածաշունչին առաջին համարը։

Սկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց։

Ինչէ՞ ստեղծեց Աստուած ամէն բաները։

Ոչինչէ։ Եբր. ԺԱ. 3։

Ի՞նչպէս կամ ինչո՞վ ստեղծեց Աստուած ամէն բաները։

Իր խօսքով։ «Եւ Աստուած ըսաւ, Լոյս ըլլայ. ու լոյս եղաւ։» Եբր. ԺԱ. 3, Ծն. Ա. 3։

Ո՞րչափ ժամանակի մէջ ստեղծեց Աստուած ամէն բաները։

Վեց օրուան մէջ։ Ծն. Ա. 31, Ել. Ի. 11։

Եօթներորդ օրն ի՞նչ ըրաւ Աստուած։

Հանգչեցաւ այն օրն և սրբեց զայն։ Ծն. Բ. 3, Ել. Ի. 11։

Աստուծոյ ամէն ըրածները բարի՞ էին։

Այո. շատ բարի էին։ Ծն. Ա. 31։

Ինչո՞ւ բոլոր արարածք կը փառաւորեն զԱստուած։

Վասն զի Նա արժանի է։ Յայտ. Դ. 11, Ե. 12, Հռովմ. ԺԱ. 36։



Աստուած ինչո՞ւ ստեղծեց մեզ։

Զինքը փառաւորելու և վայելելու համար։

Աստուած ըսա՞ծ է մեզի որ վայելենք զինքը։

Այո. Նա կ'ըսէ, Ուրախ եղէք Տէրոջմով ամէն ատեն։ Փիլ. Դ. 4, Գ. 1։

Ի՞նչպէս կրնաս փառաւորել զԱստուած։

Սիրելով զնա և ընելով ինչ որ մեզի կը պատուիրէ։ Յովհ. ԺԴ. 21։

Ընդէ՞ր պարտիս փառաւորել զԱստուած։

Վասն զի Նա ստեղծեց զիս, Նա փրկեց զիս, և Նա կը հոգայ զիս։ Ա. Կոր. Զ. 20։

## ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ

Աստուած թողա՞ծ է աշխարհս որ ինքզինք հոգայ։

Ոչ. Նա կը պահպանէ և կը կառավարէ իւր բոլոր արարածները։ Նէեմ. Թ. 6, Յովհ. Ե. 17, Կող. Ա. 17, Սաղ. ՃԳ. 19, ԼԶ. 6։

Աստուած գիտէ՞ ամէն բաները որ պիտի պատահին։

Այո։ Ես. ԽԶ. 9, 10։

Աստուած որոշած և կարգադրա՞ծ է ամէն բան որ տեղի կ'ունենայ։

Այո։ Եփես. Ա. 4, 5, 11, Գործ. Բ. 23, Գ. 18։

Ի՞նչ կոչուած է Աստուծոյ կառավարութիւնը և հոգատարութիւնը տիեզերաց մէջ։

Աստուծոյ Նախախնամութիւնը։ Սաղ. ԿԵ. 9, Եբր. ԺԱ. 40։

Աստուած կը հոգա՞յ բոլոր արարածոց ուտեստը։

Այո. նա կու տայ անասուններուն իրենց կերակուրը, ու ագռաւին ձագերուն՝ որ կ՚աղաղակեն։ Սաղ. ճխէ. 9, ճխե. 15։

Ի՞նչ ըսաւ Քրիստոս Աստուծոյ՝ ճնճղուկներուն հոգ տանելուն նկատմամբ։

Անոնցմէ մէկը մոռցուած չէ Աստուծոյ առջին։ Ղուկ. ԺԲ. 6, Մատ. Ժ. 29։

Աստուծոյ մեր հոգալուն նկատմամբ ի՞նչ կ՚ըսէ Քրիստոս։

Ձեր գլխուն բոլոր մազերն ալ համրուած են։ Մատ. Ժ. 30։

Ի՞նչ է Աստուծոյ նախախնամութեանն անոնց նկատմամբ որ կը սիրեն զնա։

Ամէն բան անոնց օգուտին ծառայեցունել։ Հռովմ. Ը. 28։

## ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Աստուած մեր տեսածներէն զատ ուրիշներն ալ ստեղծե՞ց։

Այո. նա ստեղծեց հրեշտակներ։

Ի՞նչ են հրեշտակները։

Աներևոյթ, զօրաւոր էակներ։

Ի՞նչ կ՚ընեն հրեշտակները։

Աստուծոյ կը ծառայեն և անոր ժողովրդեան կը սպասաւորեն։ Սաղ. ճԳ. 20, Եբր. Ա. 14։

Հրեշտակները կրնա՞ն տեսնել մեզ։

Այո. քանզի նոքա պահպանութիւն կ՚ընեն մեզի։ Եբր. Ա. 14, Սաղ. ՂԱ. 11, 12։



Ի՞նչ կ՚ըսէ Քրիստոս հրեշտակաց և փոքր մանկանց նկատմամբ։

Երկնից մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը։ Մատ. ԺԸ. 10։

Կա՞ն շատ հրեշտակներ։

Այո. բազմաթիւ են անոնք և անթիւ։ Ղուկ. Բ. 13, Եբր. ԺԲ. 22։

Հրեշտակներն անուն ունի՞ն։

Այո. մին կը կոչուի Գաբրիէլ և ուրիշ մը Միքայէլ։ Ղուկ. Ա. 19, 26, Յուդ. 9։

Զանազան դասերո՞ւ բաժնուած են։

Այո. հրեշտակք, հրեշտակապետք, սերովբէք և քերովբէք։ Յուդ. 9, Ծն. Գ. 24, Ես. Զ. 2։

Հրեշտակներն երբէք տեսնուա՞ծ են։

Այո. շատ անգամ։ Ծն. ԺԹ. 15, Գործ. ԺԲ. 7, Դատ. ԺԳ. 3, 19, 20, Գ Թագ. ԺԹ. 5, Ղուկ. Ա. 11։

Հրեշտակները կը բաղձա՞ն մեղաւորաց փրկութեան։

Այո. ուրախութիւն կ՚ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջևը մէկ մեղաւորի մը համար որ կ՚ապաշխարէ։ Ղուկ. ԺԵ. 10։

## ԴԵՒՔ ԵՒ ՉԱՐ ՀՈԳԻՔ

Աստուած հրեշտակները բարի՞ ստեղծեց։

Այո. Ծն. Ա. 31։

Ամէնքն ալ բարի մնացի՞ն։

Ոչ. ոմանք մեղանչեցին և ինկան։ Յուդ. 6։

Ի՞նչ կոչուեցան անկեալ հրեշտակները ։

Դեւեր կամ սատանաներ և չար ոգիներ։ Բ Օր. ԼԲ. 17, Մատ. Դ. 1, 5, 8, 10, 11, Ը. 16։

Սատանան կը սիրէ՞ մեզ։

Ոչ. այլ կը ջանայ մեղանչել տալ մեզի։ Ծն. Գ. 1, Մատ. Դ. 1։

Ի՞նչպէս կը ջանայ մեղանչել տալ մեզի ։

Վատ խորհուրդներ դնելով մեր սիրտերուն մէջ։ Ծն. Գ. 1։

Սուրբ Գիրքն ի՞նչպէս կը զգուշացունէ մեզ Սատանային դէմ։

Արթուն կեցէք, հսկեցէք, ինչու որ ձեր հակառակորդը Սատանան մռնչող առիւծի պէս կը պտըտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ։ Ա. Պետ. Ե. 8, Եփես. Զ. 11, 16։

Սուրբ Գիրքն ի՞նչ ընել կը պատուիրէ մեզի Սատանային դէմ։

Սատանային հակառակ կեցէք, և անիկա ձեզմէ պիտի փախչի։ Յակ. Դ. 7։

## ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱՅ

Ո՞վ էին առաջին ծնողք ։

Ադամ և Եւայ ։

Ադամ ինչէ՞ շինուեցաւ ։

Գետնի հողէն։ Ծն. Բ. 7, Գ. 19։



Եւայ ինչէ՞ շինուեցաւ ։

Եւայ շինուեցաւ կողէ մը զոր Աստուած առաւ Ադամէ։ Ծն, Բ. 22։

Մարմինէն զատ ի՞նչ տուաւ Աստուած Ադամայ և Եւայի ։

Հոգի տուաւ անոնց։ Ծն. Բ. 7,

Դուն ունի՞ս հոգի ինչպէս ունիս մարմին ։

Այո․ ունիմ հոգի մը որ բնաւ չմեռնիր ։ Մատ. Ժ. 28։

Ինչո՞ւ գիտես թէ ունիս հոգի ։

Զի կրնամ խորհիլ Աստուծոյ և հանդերձեալ աշխարհին վրայ ։

Ո՞րն է աւելի թանկագին, հոգի՞դ թէ մարմինդ ։

Հոգիս։ Մատ. ԺԶ. 26։

Մարմինդ պիտի մեռնի՞։

Այո. մարմինս ի հող պիտի դառնայ։ Ծն. Գ. 19։

Ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը հոգւոյն արժէքին նկատմամբ ։

Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը՝ թէ որ բոլոր աշխարհը վաստըկի և իր անձը կորսընցընէ ։ Մատ. ԺԶ. 26։

Աստուած բարի ստեղծե՞ց զԱդամ և զԵւայ ։

Այո․ զանոնք սուրբ և երջանիկ ստեղծեց ։

Աստուած ո՞ւր դրաւ զԱդամ և զԵւայ ։

Եդեմայ պարտէզին մէջ։

Արտօնուեցա՞ն ուտել պարտէզին ամէն ծառոց պտուղներէն,

Այո․ բաց ի միոյն ։ Ծն. Բ. 16, 17։

Աստուած ի՞նչ ըսաւ թէ պիտի ըլլային, եթէ ուտէին այն ծառին պտուղէն։

*Անշուշտ պիտի մեռնէին։ Ծն. Բ. 17։*

---

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուած ինքզինք ճանչցո՞ւց Ադամայ և Եւայի։

*Այո․ կը խօսէր անոնց հետ։ Ծն. Գ. 8։*

Անկէ ետքը այլոց հետ ալ խօսա՞ծ է Աստուած։

*Այո․ խօսած է Նոյի, Աբրահամի, Մովսեսի և Սամուելի հետ։ Ծն. Զ. 13, Թ. 1, ԺԲ. 1, 7, Ել. Գ. 4, 14, Գ Թագ. ԺԹ. 12, Ա Թագ. Գ. 4, 6, Ը. 7, ԺԵ. 10։*

Ուրիշ կերպերով ալ յայտնա՞ծ է Աստուած իր Ներկայութիւնը։

*Այո․ երբեմն կրակով, երբեմն ամպով և երբեմն մարդու կերպարանքով։ Ղեւ. Թ. 24, Ժ. 2, Գ Թագ. ԺԸ. 38, Ել. Խ. 38։*

Ամենէն պայծառ ի՞նչ միջոցաւ յայտնեց Աստուած ինքզինքը։

*Իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի միջոցաւ։ Աստուած մարմինով յայտնուեցաւ։ Ա Տիմ. Գ. 16, Յովհ. Ա. 18, ԺԴ. 9, Եբր. Ա. 2։*

Այժմ ի՞նչպէս կը յայտնէ Աստուած իր Ներկայութիւնը։

*Սուրբ Հոգւոյն Ներկայութեամբ։ Գործ. Բ. 1—4, Դ. 31, Ժ. 44։*



Ի՞նչպէս կ՚իմացուի Սուրբ Հոգւոյն Ներկայութիւնը։

*Անոր մարդոց սիրտերը և վարքը փոխելովը։ Յովհ. ԺԴ. 26, ԺԶ. 13, Գործ. Բ. 4, Զ. 5, 8, Ա Կոր. ԺԲ. 3—11, Գաղ. Ե. 22։*

---

## ԱՆԿՈՒՄՆ ՄԱՐԴՈՅ

Ադամ հնազանդեցա՞ւ Աստուծոյ պատուէրին։

*Ոչ. մեղանչեց Աստուծոյ դէմ։*

Ի՞նչ է մեղքը։

*Մեղքն է Աստուծոյ արգելածն ընել և պատուիրածը չընել։*

Ի՞նչ է մեղաց վարձքը։

*Մեղաց վարձքը մահ է։ Հռովմ. Զ. 23։*

Ի՞նչ էր մեր նախածնողաց մեղքը։

*Անհնազանդութիւն։*

Ի՞նչպէս անհնազանդ եղան Աստուծոյ։

*Արգելեալ պտուղն ուտելով։ Ծն. Բ. 16, 17։*

Ո՞վ փորձեց զանոնք և հրապուրեց մեղանչել։

*Սատանան փորձեց զԵւայ, հրապուրելով ուտել արգելուած ծառին պտուղը. և Եւայ Ադամայ ալ տուաւ անկէ։*

Ադամ և Եւայ մեղանչելէ ետքը ի՞նչ եղան։

*Վախցան և պահուեցան Աստուծոյ երեսէն։ Ծն. Գ. 8։*

Երբ Աստուած Ադամայ խօսեցաւ անոր անհնազանդութեան վրայ, Ադամ որո՞ւ վրայ նետեց յանցանքը։

Իւր կնոջ վրայ, ըսելով, Այն կնիկը՝ որ ինծի հետ ըլլալու տուիր, ան ինծի տուաւ ծառէն, ու ես կերայ։ Ծն. գ. 12։

Երբ Աստուած Եւայի խօսեցաւ անոր անհնազանդութեան վրայ, նա ի՞նչպէս ջանաց արդարացնել ինքզինքը։

Ըսաւ, Օձը իս խաբեց, ու ես կերայ։

Սատանան ի՞նչ կերպարանքով երեւցաւ Եւայի։

Օձի կերպարանքով։ Ծն. գ. 1։

Յետոյ ի՞նչ կոչուեցաւ Սատանան։

Առջի օձը։ Յայտ. ԺԲ. 9, Ի. 2։

Ի՞նչ արդիւնք ունեցաւ մեղքը մեր նախածնողաց վրայ։

Փոխանակ սուրբ և երջանիկ ըլլալու եղան մեղաւոր և թշուառ։ Ծն. գ. 10, 17։

Ուրիշ ի՞նչ արդիւնք ունեցաւ մեղքը անոնց վրայ։

Մահկանացու եղան։ Հռովմ. Ե. 12։

Ո՞րչափ ապրեցաւ Ադամ։

Ինն հարիւր երեսուն տարի։ Ծն. Ե. 5։

Ադամայ մեղքը մեր վրայ ի՞նչ արդիւնք ունեցաւ։

Մեղաց և թշուառութեան վիճակի մէջ կը ծնանինք։ Սաղ. ԾԱ. 5։

Ամէն մարդ մեղաւո՞ր է։

Այո. արդար մը չկայ՝ ոչ մէկ հատ մը, Հռովմ. գ. 10, 23։



## ԿԱՅԷՆ ԵՒ ՀԱԲԷԼ

Ո՞վ էին Կայէն և Հաբէլ։

Ադամայ և Եւայի որդիքը։ Ծն. Դ. 1, 2։

Ի՞նչ էր անոնց գործը։

Կայէն երկրագործ էր, Հաբէլ՝ ոչխարներու հովիւ։ Ծն. Դ. 2։

Սորվա՞ծ էին զԱստուած պաշտել։

Այո։

Ի՞նչ էր իրենց պաշտման եղանակը։

Ընծայ կը մատուցանէին Աստուծոյ։

Կայէն ի՞նչ ընծայ բերաւ Տէրոջը։

Երկրի պտուղէն։ Ծն. Դ. 3։

Հաբէլ ի՞նչ ընծայ բերաւ։

Իր ոչխարներուն առջինեկներէն։ Ծն. Դ. 4։

Տէրը որո՞ւն ընծան ընդունեց։

Հաբելին։ Ծն. Դ. 4։

Ինչո՞ւ Աստուած աւելի ընդունեց Հաբէլի պատարագը։

Վասն զի Հաբէլ հաւատքով մատոյց զայն։ Եբր. ԺԱ. 4։

Հաբէլի պատարագն ի՞նչ կը ներկայէր։

ԶՔրիստոս, Աստուծոյ Գառը։ Յովհ. Ա. 29, 36, Գործ. Ը. 32, Յայտ. Ե. 6։

Այն ժամանակ ի՞նչ ըրաւ Կայէն։

Սպաննեց իւր Հաբէլ եղբայրը։ Ծն. Դ. 8։

Ինչո՞ւ սպաննեց Կայէն իւր Հաբէլ եղբայրը։

Անոր համար որ իր գործքերը չար էին, ու իր եղբօրը գործքերը՝ արդար։ Ա. Յովհ. Գ. 12։

## ԵՆՈՎՔ

Ի՞նչ գրուած է Ենովքայ հաւատքին վրայ։

Ենովք Աստուծոյ հետ քալեց։ Ծն. Ե. 24, Եբր. ԺԱ. 5։

Ի՞նչ եղաւ Ենովք։

Փոխադրուեցաւ։ Եբր. ԺԱ. 5, Յուդ. 14։

Ի՞նչ կը նշանակէ այս։

Նա չմեռաւ։ Աստուած երկինք առաւ զնա։

Կրնա՞նք այժմ մենք քալել Աստուծոյ հետ։

Այո. եթէ կը սիրենք զՏէր Յիսուս Քրիստոս։

Աստուած ի՞նչ կ'ըսէ այդպիսի հաւատացելոց համար։

Անոնց մէջը պիտի բնակիմ, ու անոնց մէջը պիտի քալեմ, և անոնց հայր պիտի ըլլամ։ Բ Կոր. Զ. 16, 18, Ղեւ. ԻԶ. 12, Ա Յովհ. Դ. 15։

## ՋՐՀԵՂԵՂ

Աշխարհս երբեք կործանո՞ւած է։

Այո, ջրհեղեղով։

Ո՞վ ղրկեց ջրհեղեղը։

Աստուած ղրկեց զայն։ Ծն. Զ. 13, 17։

Ինչո՞ւ Աստուած կործանեց աշխարհը ջրհեղեղով։

Վասն զի մարդիկ շատ չարացած էին։ Ծն. Զ. 7։

Որո՞ւ յայտնեց Աստուած ջրհեղեղով աշխարհը ջնջելու խորհուրդը։

Նոյի։ Ծն. Զ. 13, 17։



Ի՞նչ ընել պատուիրեց անոր։

Տապան մը շինել։ Ծն. Զ. 14։

Ո՞վ փրկուեցաւ տապանով։

Նոյ և իւր կինը և իւր երեք որդիքը և անոնց կիները։ Ծն. Զ. 18, Է. 23, Ա Պետ. Գ. 20։

Որո՞նք մտան ի տապան Նոյէ և նորա ընտանիքէն զատ։

Ամէն կենդանիներէն և ամէն թռչուններէն երկերկու հատ։ Ծն. Զ. 19։

Դուրսը մնացողներն ի՞նչ եղան։

Երկրի վրայ շարժող ամէն մարմին՝ թէ թռչուն, թէ անասուն, թէ գազան և թէ սողուն և ամէն մարդ մեռան։ Միայն Նոյ և իրեն հետ տապանին մէջ գտնուողները ողջ մնացին։ Ծն. Է. 21, 23, Մատ. ԻԴ. 37։

Աստուած ըսա՞ւ թէ նորէն պիտի ջնջէ աշխարհը։

Այո. վերջին օրը։ Բ Պետ. Գ. 7, Եբր. ԺԲ. 26։

Ի՞նչ պիտի ըլլայ երկիրը վերջին օրը։

Երկիրս և ինչ գործեր որ կը գտնուին անոր մէջ՝ պիտի այրին։ Բ Պետ. Գ. 10։

## ԱԲՐԱՀԱՄ

Ո՞վ էր Աբրահամ։

Հրէից հայրը։ Յովհ. Ը. 39։

Ի՞նչ կոչուեցաւ։

Աստուծոյ բարեկամ։ Յակ. Բ. 23։



5887-57
...ՏԱԿԱՆ ԳՐԱԴԱ... Гос. библиотека ZUUՌ-Арм.ССР им. А. Мясникяна ... ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի՞նչ ըսուած է անոր հաւատքին նկատմամբ։

Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու անոր արդարութիւն սեպուեցաւ։ Գաղ. Գ. 6, Եբր. ԺԱ. 8։

Ի՞նչպէս ցուցուց նա իւր հաւատքը։

Իւր հայրենիքէն ելաւ գնաց Աստուծոյ հրամանին համեմատ՝ չգիտնալով թէ ո՛ւր կ'երթար։ Ծն. ԺԲ. 1, Եբր. ԺԱ. 8։

Ի՞նչ նուիրեց Աբրահամ Աստուծոյ հրամանաւ։

Իւր Իսահակ որդին։ Ծն. ԻԲ. 1—9, Եբր. ԺԱ. 17։

Աստուած թողո՞ւց Աբրահամի զոհել Իսահակը։

Ոչ. Աստուած խոյ մը պատրաստեց անոր՝ Իսահակին տեղը զոհելու համար։ Ծն. ԻԲ. 13,

Ի՞նչ խոստացաւ Աստուած Աբրահամի։

Քեզ պիտի օրհնեմ, ու երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին։ Ծն. ԺԲ. 3։

Զո՞վ կ'ակնարկէր այս խոստումը։

ԶՏէր Յիսուս Քրիստոս։ Գործ. Գ. 25, 26, Հռովմ. Թ. 5։

Աբրահամ հաւատա՞ց Տէր Յիսուս Քրիստոսի։

Այո. Յովհ. Ը. 56։

Ի՞նչ ուխտ ըրաւ Աստուած Աբրահամի և անոր զաւակաց հետ։

Քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ Աստուած պիտի ըլլամ։ Ծն. ԺԷ. 7, Գործ. Բ. 39, Ա. Կոր. Է. 14։



## ՂՈՎՏ, ՍՈԴՈՄ, ԳՈՄՈՐ

Ի՞նչ պատահեցաւ Սոդոմ և Գոմոր քաղաքներուն։

Աստուած կորսնցուց զանոնք երկնատեղաց կրակով և ծծումբով։ Ծն. ԺԹ. 24։

Ինչո՞ւ կորսնցուց զանոնք։

Վասն զի խիստ չար էին։ Ծն. ԺԸ. 20։

Զո՞վ ազատեց Աստուած Սոդոմայ պատիժէն։

Արդար Ղովտը և անոր կինը և դուստրերը։ Ծն. ԺԹ. 15, 16, Բ Պետ. Բ. 7, 8։

Ղովտի կինն ի՞նչ եղաւ։

Ետին նայեցաւ, ու աղի արձան եղաւ։ Ծն. ԺԹ. 26։

Ի՞նչ զգուշութեան կու տայ Քրիստոս անոր նկատմամբ։

Միտքերնիդ բերէք Ղովտին կնիկը։ Ղուկ. ԺԷ. 32։

Ո՞վ էր Յակոբ։

Աբրահամու որդւոյն Իսահակայ որդին։

Իսահակ ուրիշ որդի ունէ՞ր։

Այո. Եսաւ։

Ի՞նչ յիմարութեան ունեցաւ Եսաւ։

Իւր անդրանկութեան իրաւունքը ծախեց ապուրի մը համար։ Ծն. ԻԵ. 33, Եբր. ԺԲ. 16։

---

## ՅՈՎՍԷՓ

Ո՞վ ծախուեցաւ իւր եղբայրներէն իբրև գերի և տարուեցաւ Եգիպտոս։

Յովսէփ։ Ծն. ԼԷ. 36։

Ո՞վ էր Յովսէփայ հետ։

Տէրը Յովսէփին հետն էր։ Ծն. Լթ. 2, 21։

Տէրոջը Յովսէփայ հետ ըլլալուն հետեւանքն ի՞նչ եղաւ։

Նա ինչ որ ընէր, Տէրը կը յաջողէր։ Ծն. Լթ. 2, 3։

Յովսէփայ տէրը զայս տեսնելով ի՞նչ ըրաւ։

Իւր տան և իւր բոլոր ունեցածին վրայ վերակացու դրաւ Յովսէփը։ Ծն. Լթ. 4։

Երբ Յովսէփ ստութեամբ ամբաստանուեցաւ, տէրն ի՞նչ ըրաւ անոր։

Բանտը դրաւ զնա։ Ծն. Լթ. 20։

Հոն ալ Տէրն անոր հե՞տ էր։

Այո. բանտապետը Յովսէփին ձեռքը յանձնեց բոլոր բանտարկեալները։ Ծն. Լթ. 21, 22։

Յովսէփ ի՞նչպէս ազատեցաւ բանտէն։

Տէրը կարողացուց զնա մեկնել փարաւոնի երազը։ Ծն. ԽԱ. 16։

Յայնժամ ի՞նչ եղաւ Յովսէփայ։

Փարաւոն բոլոր Եգիպտոսի վրայ իշխան կարգեց զնա։

Յետոյ երբ տեսաւ Յովսէփ իւր եղբայրները իւր իշխանութեան տակ, ի՞նչպէս վարուեցաւ անոնց հետ։

Ներեց և հոգ տարաւ անոնց։ Ծն. ԽԵ. 1—11։

ՅՈԲ

Ո՞վ էր ամենէն աւելի համբերող մարդը։

Յոբ։ Յակ. Ե. 11։



Ի՞նչ վկայութիւն տրուած է Յոբայ համար։

Կատարեալ ու արդար էր։ Յոբ. Ա. 1։

Ի՞նչ վիճակ ունէր Յոբ։

Տասն զաւակներ ունէր և բազում ստացուածք։ Յոբ. Ա. 2, 3։

Երբ Սատանան չարախօսեց Յոբայ վրայ, Աստուած ի՞նչ ըրաւ Յոբայ։

Թոյլ տուաւ Սատանային փորձել զնա վիշտերով և տառապանքներով։ Յոբ. Ա. 9, 12։

Ի՞նչ ըրաւ Սատանան Յոբայ։

Մէկ օրուան մէջ անոր բոլոր հարստութիւնը կորսուեցաւ և բոլոր զաւակները մեռան։

Յոբ, երբ այս բաները լսեց, ի՞նչ ըրաւ։

Տէրոջը երկրպագեց ու ըսաւ, Տէրը տուաւ ու Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը։ Յոբ. Ա. 20, 21։

Սատանան յետոյ ի՞նչ ըրաւ Յոբայ։

Ոտքին թաթէն մինչև գագաթը գէշ պալարներով զարկաւ։ Յոբ. Բ. 7։

Յոբ ի՞նչ ըսաւ իւր կնոջ, երբ նա ստիպեց որ հայհոյէ ու մեռնի։

Աստուծոյ ձեռքէն միայն բարիքը ընդունինք ու չարիքը չընդունի՞նք։ Յոբ. Բ. 9, 10։

Բոլոր այս փորձերուն մէջ ի՞նչ ըրաւ Յոբ։

Չմեղանչեց, ու Աստուծոյ անզգամութիւն չտուաւ։ Յոբ. Ա. 22, Բ. 10,

Ի՞նչ եղաւ Յոբայ այս փորձանաց վախճանը։

Տէրը Յոբին վերջը առջինէն աւելի օրհնեց։ Յոբ. ԽԲ. 12։

## ԻՍՐԱՅԵԼԱՑԻՔ ԿԱՄ ՀՐԵԱՅՔ—ՄՈՎՍԷՍ— ԵԳԻՊՏՈՍԷ ԵԼՔԸ, ԵՒ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Յովսէփայ մեռնելէն ետքը ի՞նչ եղան Իսրայելացիք։

Եգիպտացիք գերի ըրին զանոնք։ Ել. Ա. 7, 14։

Եգիպտացիք քաղցրութեամբ վարուեցա՞ն անոնց հետ։

Ոչ։ Ել. Ա. 14։

Փարաւոն թագաւոր ի՞նչ հրամայեց անոնց արու զաւակաց նկատմամբ։

Հրամայեց որ անոնք գետը նետուին։ Ել. Ա. 22։

Ի՞նչ ըրին Իսրայելի որդիք։

Աղաղակեցին, և անոնց աղաղակը Աստուծոյ ելաւ։ Ել. Բ. 23։

Աստուած լսե՞ց անոնց հեծութեան այս աղաղակը։

Այո․ լսեց։ Ել. Բ. 24։

Երբ փոքրիկ մանուկ էր Մովսէս, մայրն ո՞ւր դրաւ զնա։

Ձիւթով ծեփուած պրտուեղէն տապանակաւ մը գետին եզերքը ձգեց։ Ել. Բ. 3։

Յետոյ ի՞նչ եղաւ Մովսէս։

Փարաւոնի դուստրը գտաւ զնա և որդեգիր ըրաւ իրեն։ Ել. Բ. 5։



Երբ Մովսէս մեծցաւ, ո՞ր վիճակն աւելի ընտրեց։

Աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղաց ժամանակաւոր զուարճութիւնը վայելել։ Եբր. ԺԱ. 25, 26։

Աստուած ի՞նչ ընել պատուիրեց Մովսէսի։

Եգիպտոսէ հանել Իսրայելի որդիները։ Ել. Գ. 10։

Ինչպէս ազատեց Աստուած Իսրայելի որդիները Եգիպտոսի երկրէն։

Մեծ պատուհասներ ղրկելով Եգիպտացւոց վրայ։ Ել. Է., Ը., Թ., Ժ.։

Ի՞նչ էր վերջին մեծ հարուածը։

Աստուած մեռցուց Եգիպտացւոց բոլոր անդրանիկները։ Ել. ԺԲ. 29։

Աստուած ինչպէս անցուց Իսրայելացիները Կարմիր ծովէն։

Ջուրերը բաժնեց և Իսրայելի որդիքը ցամաքով անցան ծովուն մէջէն։ Ել. ԺԴ. 21, 22, 29։

Երբ Եգիպտացիք ինկան Իսրայելացւոց ետեւէն, Աստուած ի՞նչ ըրաւ անոնց։

Ջուրերը ետ դարձուց և խեղդեց Եգիպտացիները։

Ո՞ր ճամբով առաջնորդեց Աստուած Իսրայելացւոց։

Անապատի ճամբով։ Ել. ԺԵ. 22։

Դէպ ի ո՞ր երկիրն առաջնորդեց Աստուած։

Դէպ այն երկիրը զոր խոստացած էր նա իրենց

*հօրը Աբրահամի։ Ծն. ԺԵ. 14, 16, ԺԷ. 8։*

Աստուած կ'երթա՞ր Իսրայէլացւոց հետ։

*Այո․ ցորեկը ամպի սիւնով, ու գիշերը կրակի սիւնով։ Ել. ԺԳ. 21, ԺԴ. 19։*

Աստուած անապատին մէջ ի՞նչպէս ջուր տուաւ Իսրայէլացւոց։

*Մովսէսի հրամայեց ապառաժին զարնել իր գաւազանով, և ջուր բխեց։ Ել. ԺԷ. 6։*

Ի՞նչպէս կերակրեց զանոնք անապատին մէջ։

*Ամէն օր հաց կը տեղար երկինքէն։ Ել. ԺԶ. 4։*

Ի՞նչ անուանեցաւ այդ հացը։

*Մանանայ։*

Անոնք մինչև ե՞րբ կերակրուեցան այդ հացով։

*Քառասուն տարի, մինչև որ մտան Աւետեաց Երկիրը։ Ել. ԺԶ. 35։*

Ի՞նչ կը ցուցնէ մեզ Իսրայէլացւոց գերութենէն այս ազատութիւնը։

*Կը ցուցնէ թէ Աստուած կ'ազատէ զմեզ մեղաց գերութենէն և Սատանայի ծառայութենէն։*

Ի՞նչ կը ցուցնէ մեզ Աստուծոյ Իսրայէլացիներն առաջնորդելը դէպ ի Աւետեաց Երկիրը։

*Կը ցուցնէ թէ Աստուած կ'առաջնորդէ զմեզ այս աշխարհէս դէպ յերկինս։ Ա Կոր. Ժ. 11, Յովհ. ԺԴ. 2, Բ Կոր. Ե. 1։*

Ո՞վ է երկինքէն իջած ճշմարիտ Հացը։

*Տէր Յիսուս Քրիստոս։ Յովհ. Զ. 32, 33, 48։*



Իսրայէլացիք, երբ Մովսէսի դէմ խօսեցան, ի՞նչ պատիժ կրեցին։

*Աստուած ղրկեց կիզող օձեր, որոնցմէ խայթուելով շատեր մեռան։ Թու. ԻԱ. 6, Ա Կոր. Ժ. 9։*

Երբ խոստովանեցան իրենց մեղքերը և Աստուծոյ աղաղակեցին, ի՞նչ ըրաւ նա։

*Պատուիրեց Մովսէսի պղնձէ օձ մը շինել և ձողի մը վրայ դնել։ Թու. ԻԱ. 7, 8։*

Իսրայէլացւոց ի՞նչ օգուտ ըրաւ այդ։

*Խայթուողները հրամանին համեմատ պղնձէ օձին նայելով կը բժշկուէին։ Թու. ԻԱ. 9։*

Ի՞նչ կ'ըսէ Քրիստոս Մովսէսի պղնձէ այս օձը բարձրացունելուն նկատմամբ։

*Անանկ ալ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ։ Յովհ. Գ. 14։*

Ի՞նչ օգուտ յառաջ պիտի գար Քրիստոսի բարձրանալէն։

*Որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։ Յովհ. Գ. 15։*

## ՅԵՍՈՒ

Մովսէսէ ետքը ո՞վ առաջնորդեց Իսրայէլացւոց դէպ ի Աւետեաց Երկիրը։

*Յեսու։ Յես. Ա. 1։*

Երբ եկան Յորդանան գետը, ի՞նչպէս անցան անկէ։

Տէրը բաժնեց ջուրերը մինչև որ անցան իսրայելացիք։ Յես. Գ. 13, 16։

Երբ Յեսու ծերացաւ և մօտ էր մեռնելու, ի՞նչ ընել առաջարկեց ժողովրդեան։

Վախնալ Տէրոջմէն և ծառայել անոր՝ ընտրելով նոյն օրը թէ ո՛վ պիտի պաշտեն, Եհովա՞ն թէ օտար աստուած։ Յես. ԻԴ. 14։

Իրեն համար ի՞նչ ըսաւ։

Բայց ես ու իմ տունս Եհովան պիտի պաշտենք։ Յես. ԻԴ. 15։

Մովսէս, իր մահէն առաջ, ի՞նչ ընտրութեան ընել առաջարկեց Իսրայէլի որդւոց։

Կեանքը ու մահը, օրհնութիւնը ու անէծքը ձեր առջևը դրի, ուրեմն կեանքը ընտրէ որ ապրիս դուն և քու սերունդդ։ Բ Օր. Լ. 19։

# ԴԱՏԱՒՈՐՔ

Իսրայելացիք Աւետեաց Երկիրը մտնելէն ետքը շարունակեցի՞ն պաշտել Եհովան։

Ոչ. Թողուցին Տէրը և ծառայեցին սուտ աստուածներու։ Դատ. Բ. 13, Գ. 7, Դ. 1։

Այն ատեն Տէրն ի՞նչ ըրաւ անոնց։

Իրենց թշնամիներուն ձեռքը մատնեց զանոնք։ Դատ. Բ. 14, Գ. 8, Դ. 2, Զ. 1։



Երբ նեղութեան ժամանակ կ'աղաղակէին Տէրոջը, ի՞նչ կ'ընէր նա։

Ազատիչներ կը հանէր անոնց։

Ո՞վ էր ամենէն ուժեղ մարդը։

Սամփսոն։

Աստուած Սամփսոնի հե՞տ էր։

Այո. Տէրն օրհնեց զնա և Տէրոջը Հոգին եկաւ անոր վրայ։ Դատ. ԺԳ. 24, ԺԴ. 6, 19, ԺԵ. 14, ԺԶ. 28, Եբր. ԺԱ. 32, 33։

Ի՞նչ մեծ բաներ ըրաւ Սամփսոն։

Առիւծ մը իր ձեռքերով ճեղքեց, էշու ծնօտով մը հազար փղշտացի մեռցուց և կռատուն մը փլցուց։ Դատ. ԺԴ. 5, 6, ԺԵ. 8, 15, ԺԶ. 3, 29, 30։

Ո՞վ մատնեց Սամփսոնը Փղշտացւոց։

Դալիլա։ Դատ. ԺԶ. 4, 18։

# ՍԱՄՈՒԷԼ

Ո՞վ էր Սամուէլի մայրը։

Աննա։

Աննա ի՞նչ խոստացաւ Տէրոջը եթէ տար նա զաւակ մը։

Զանիկա Տէրոջը պիտի նուիրեմ իր կենացը բոլոր օրերուն մէջը։ Ա. Թագ. Ա. 10, 11։

Կատարե՞ց իր խոստումը։

Այո։ Ա. Թագ. Ա. 27, 28, Բ. 18։

Սամուէլ ծառայութիւն կ՚ընէ՞ր Տէրոջը առջև ։

Այո · մինչև անգամ երբ դեռ մանուկ էր ։ Ա. Թագ. Բ. 18 ։

Տէրն յայտնե՞ց ինքզինքը Սամուէլի ։

Այո · Տէրը շատ անգամ խօսեցաւ անոր ։ Ա. Թագ. Գ. 4, 6, 11, 21, Ը. 7, Թ. 15, ԺԵ. 10 ։

Ի՞նչ ըսուած է Սամուէլի համար երբ կը մեծնար ։

Տէրը անոր հետ էր ։ Ա. Թագ. Գ. 19 ։

Սամուէլ ինչպէս ազատեց զԻսրայէլ փղշտացիներէն ։

Աղօթելով Աստուծոյ և Տէրը լսելով սաստիկ որոտում հանեց փղշտացւոց վրայ ։ Ա. Թագ. Է. 9 ։

ՍԱՒՈՒՂ, ԴԱՒԻԹ

Ո՞վ էր Իսրայէլի առաջին թագաւորը ։

Սաւուղ ։ Ա. Թագ. Ժ. 24. Գործ. ԺԳ. 21 ։

Աստուած ինչո՞ւ մերժեց զնա ։

Վասն զի անհնազանդ եղաւ Աստուծոյ ։ Ա. Թագ. ԺԵ. 3, 9, 11 ։

Աստուծոյ չհնազանդելու ինչ պատճառ յառաջ բերաւ ։

Ըսաւ թէ կ՚ուզէր զոհ մատուցանել ։ Ա. Թագ. ԺԵ. 21 ։

Աստուած ինչ պատասխան տուաւ ։

Հնազանդութիւնը զոհէն աղէկ է ։ Ա. Թագ. ԺԵ. 22, Ել. ԺԹ, 5 ։

Աստուած Սաւուղի տեղը զո՞վ թագաւոր դրաւ Իսրայէլի ։

Զդաւիթ ։ Ա. Թագ. ԺԶ. 1, 12, Գործ. ԺԳ. 22 ։



Ի՞նչ էր Դաւթի առաջին գործը ։

Իւր հօր ոչխարները կ՚արածէր ։

Ի՞նչ էր այն հսկային անունը զոր Դաւիթ սպաննեց ։

Գողիաթ ։ Ա. Թագ. ԺԷ. 4 ։

Դաւիթ ինչպէս սպաննեց զԳողիաթ ։

Քարով և պարսատիկով ։ Ա. Թագ. ԺԷ. 40, 49 ։

Ինչո՞ւ Աստուած ընտրեց զԴաւիթ Իսրայէլի թագաւոր ։

Որովհետև նա էր Աստուծոյ սրտին համեմատ մարդ ։ Ա. Թագ. ԺԳ. 14, Գործ. ԺԳ. 22 ։

Դաւիթ ինչպէս մեծցաւ և յաջողութիւն գտաւ ։

Աստուած անոր հետ էր և մեծցուց զնա ։ Բ Թագ. Է. 8, 9 ։

Դաւիթ մեծ մեղքեր գործե՞ց ։

Այո · բայց զղջաց և աղօթեց Աստուծոյ և թողութիւն գտաւ ։ Բ Թագ. ԺԲ. 13, Սաղ. ԾԱ. ։

Դաւիթ Սուրբ Գրոց ո՞ր մասը գրեց ։

Սաղմոսաց մեծ մասը ։

Ինչո՞ւ Քրիստոս Որդի Դաւթի կը կոչուի ։

Քանզի Դաւթի սերունդէն էր ։ Մատ. Ա. 6, Գործ. Բ. 30 ։

Դաւիթ հաւատա՞ց Քրիստոսի ։

Այո. և Տէր կոչեց զնա ։ Սաղ. ՃԺ. 1, Մար. ԺԲ. 36, 37 ։

## ՍՈՂՈՄՈՆ

Ո՞վ յաջորդեց Դաւիթի։

Սողոմոն իւր որդին։ Գ Թագ. Բ. 12։

Ե՞րբ Աստուած ըսաւ Սողոմոնի, բան մը խնդրէ որ տեղի տամ, ի՞նչ խնդրեց Սողոմոն։

Իմաստուն սիրտ։ Գ Թագ. Գ. 5, 9։

Ցայնժամ Տէրն ի՞նչ ըսաւ։

Որովհետև աս բանը խնդրեցիր, ահա քեզի իմաստուն ու հանճարեղ սիրտ տուի, նաև թէ հարստութիւն և թէ փառք։ Գ Թագ. Գ. 11—13։

Ի՞նչ բանով հռչակաւոր եղաւ Սողոմոն։

Իւր իմաստութեամբ և հարստութեամբ։ Գ Թագ. Դ. 30, 34, Ժ. 21։

Ո՞ր էր մեծ տաճարը զոր շինեց Սողոմոն։

Աստուծոյ տաճարն յԵրուսաղէմ։ Գ Թագ. Ե. 5, Զ. 2։

Ո՞ր թագուհին եկաւ լսել Սողոմոնի իմաստութիւնը և փորձել զնա։

Սաբայի թագուհին։ Գ Թագ. Ժ. 1, Ղուկ. ԺԱ. 31։

Սողոմոն, կենաց բոլոր հաճոյքները վայելելէ ետքը, ի՞նչ ըսաւ անոնց համար։

Ամէնը ունայնութիւն է և հոգիի տանջանք։ Ժող. Ա. 2, Բ. 11, 19։

Ի՞նչ խրատ կու տայ երիտասարդին։

Քու ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ։ Ժող. ԺԲ. 1։



Ի՞նչ է, կ՚ըսէ, մարդուս բոլոր պարտաւորութիւնը։

Աստուծմէ վախցիր ու անոր պատուիրանքները պահէ։ Ժող. ԺԲ. 13։

Ասոր ի՞նչ պատճառ յառաջ կը բերէ։

Քանզի Աստուած ամէն գործքը՝ ամէն ծածուկ բաներու հետ՝ թէ բարին և թէ չարը դատաստանի պիտի բերէ։ Ժող. ԺԲ. 14, Բ Կոր. Ե. 10, Մատ. ԺԶ. 27, ԺԲ. 36, Յայտ. Ի. 13։

## ԵՂԻԱ

Երբ Իսրայելի թագաւորները չարացան, ո՞վ էր առաջին մեծ մարգարէն որ ղրկուեցաւ զանոնք յանդիմանելու համար։

Եղիա։ Գ Թագ. ԺԷ. 1։

Մտիկ ըրի՞ն Եղիայի։

Ոչ. ջանացին սպաննել զնա։

Աստուած ի՞նչ ըրաւ ի պատասխանի Եղիայի աղօթքին։

Անձրև չղրկեց երկրի վրայ։ Գ Թագ. ԺԷ. 1, Յակ. Ե. 17։

Հետևանքն ի՞նչ եղաւ։

Մեծ սով, այսինքն՝ նուաղութիւն ուտելեաց և ըմպելեաց։

Եղիա ի՞նչպէս կերակրուեցաւ։

Աստուած ղրկեց ագռաւներ որ կերակուր կը բերէին անոր։ Գ Թագ. ԺԷ. 6։

Յետոյ ո՞վ կերակրեց Եղիան։

Աղքատ այրի մը, Գ Թագ. ԺԷ. 9, Ղուկ. Դ. 26։

Ի՞նչ կերակուր ունէր աղքատ այրին։

Բուռ մը ալիւր և քիչ մը իւղ։ Գ Թագ. ԺԷ. 12։

Մինչև ե՞րբ բաւեց այդ։

Տարի մը։ Գ Թագ. ԺԷ. 15։

Ի՞նչ զօրութեամբ այդչափ տևեց։

Աստուած հրաշքով աճեցուց զայն։

Երբ այրւոյն տղան մեռաւ, Եղիա ի՞նչ ըրաւ։

Աղօթեց, և Տէրը նորէն կենդանացուց զնա։ Գ Թագ. ԺԷ. 20—22։

Երբ Եղիա անձրևի համար աղօթեց, անձրև եկա՞ւ։

Այո. Աստուած անձրև ղրկեց։ Գ Թագ. ԺԸ. 45, Յակ. Ե. 18։

Աստուած, երբ ընդունեց Եղիայի զոհը, ի՞նչպէս ցուցուց թէ ինքն է ճշմարիտ Աստուած։

Կրակ ղրկեց երկինքէն՝ զոհն այրելու համար։ Գ Թագ. ԺԸ. 17—38։

Եղիա վերջապէս ի՞նչ եղաւ։

Հրեղէն կառօք երկինք փոխադրուեցաւ։ Դ Թագ. Բ. 11։

## ԵՂԻՍԷ

Ո՞ր մարգարէն բժշկեց Նէեմանի բորոտութիւնը։

Եղիսէ։ Դ Թագ. Ե. 1—14։

Ի՞նչ տեսակ ախտ է բորոտութիւնը։

Գարշելի և անբուժելի ախտ։ Ղեւ. ԺԳ. 45, 46։



Եղիսէ ի՞նչ ընել պատուիրեց Նէեմանի։

Եօթն անգամ լուացուիլ Յորդանան գետին մէջ։ Դ Թագ. Ե. 10։

Յորդանանու ջրին լուացուիլը կը բժշկէ՞ բորոտութիւնը։

Ոչ. չբժշկեր։ Դ Թագ. Ե. 7, 27, Բ Մնաց. ԻԶ. 21։

Ի՞նչ եղաւ Նէեման երբ լուացուեցաւ Յորդանանու մէջ։

Բժշկուեցաւ։ Դ Թագ. Ե. 14։

Ուրեմն լուացումը ի՞նչպէս բժշկեց զնա։

Վասն զի Աստուած այդ միջոցն ընտրեց զնա բժշկելու համար։

Բորոտ մը ի՞նչ ըսաւ Քրիստոսի։

Տէր, թէ որ ուզես՝ կրնաս զիս մաքրել։ Մատ. Ը. 2։

Քրիստոս ի՞նչ ըրաւ։

Դպաւ անոր և ըսաւ, կ'ուզեմ՝ մաքրուէ։

Յայնժամ ի՞նչ եղաւ։

Իսկոյն մաքրուեցաւ։ Մատ. Ը. 3։

Մեր մեղանչական բնութիւնն ի՞նչպէս նման է բորոտութեան։

Զզուելի և անբուժելի ըլլալովը։ Հռովմ. Է. 24, Եզեկ. ԺԸ. 4։

Մենք ի՞նչպէս կրնանք մաքրուիլ մեղքէ։

Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ։ Ա Յովհ. Ա. 7, Եբր. Թ. 14։

## ՅՈՎՆԱՆ

Ի՞նչ պատահեցաւ Յովնան մարգարէին երբ ծովը նետուեցաւ։

Տէրը պատրաստած էր կէտ ձուկ մը՝ կլլել զՅովնան։ Յովն. Ա. 17։

Ո՞րչափ ժամանակ մնաց Յովնան ձուկին փորին մէջ։

Երեք օր ու երեք գիշեր։ Յովն. Ա. 17, Մատթ. ԺԲ. 40։

Յովնան ի՞նչ եղաւ յետոյ։

Աղօթք ըրաւ Աստուծոյ, և ձուկը ցամաք նետեց զՅովնան։ Յովն. Բ. 10։

Յետոյ ի՞նչ ըրաւ Յովնան։

Կատարեց ինչ որ Աստուած առաջ պատուիրած էր անոր։ Յովն. Գ. 3։

Աստուած ի՞նչ ըսած էր Յովնանի։

Երթալ քարոզել Նինուէացւոց թէ Աստուած պիտի կործանէր Նինուէն։ Յովն. Ա. 2։

Աստուած այն ժամանակ կործանե՞ց Նինուէն։

Ոչ. ապաշխարեցին, և Աստուած խնայեց անոնց։ Յովն. Գ. 10։

## ԴԱՆԻԷԼ

Աստուած ո՞ր մարգարէն ազատեց առիւծներէն։

Դանիէլը։

Ինչո՞ւ ձգուեցաւ Դանիէլ առիւծուց գուբը։

Վասն զի շարունակեց աղօթել առ Աստ-



ուած, թէև արգելիչ օրէնք գրուած էր։ Դան. Զ. 7, 10։

Ինչո՞ւ առիւծները չպատառեցին զնա։

Վասն զի Աստուած ղրկեց իր հրեշտակը և գոցեց անոնց բերանը։ Դան. Զ. 22։

Երբ անոնք որ կ'ուզէին կորսնցունել Դանիէլը՝ ձգուեցան գուբը, ի՞նչ պատահեցաւ։

Առիւծները կտոր կտոր ըրին զանոնք։ Դան. Զ. 24։

Սեդրաք, Միսաք և Աբեդնագով ո՞ւր ձգուեցան։

Բորբոքած կրակի հնոցին մէջ։ Դան. Գ. 20։

Ինչո՞ւ ձգուեցան հոն։

Վասն զի չուզեցին երկրպագել ոսկի արձանին։ Դան. Գ. 7։

Այրեցա՞ն։

Ոչ. անոնց գլխուն մէկ մազը չխանձեցաւ, և ոչ անոնց հանդերձները։ Դան. Գ. 27։

Ո՞վ էր անոնց հետ կրակին մէջ քալողը։

Ուրիշ մէկը, զոր Թագաւորը կարծեց որդի աստուծոյ։ Դան. Գ. 25։

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

Ո՞վ էր Յովհաննէս Մկրտիչ։

Այն մարգարէն որ Հրէից կը քարոզէր Քրիստոսի գալուստը։ Մաղ. Դ. 5, 6, Մատ. ԺԱ. 14, Յովհ. Ա. 29։

Ո՞վ անոր հօրը կանխայայտնեց անոր ծնունդը և կոչումը։

Գաբրիէլ հրեշտակը։ Ղուկ. Ա. 11, 17, 19։

Ի՞նչ կը քարոզէր Յովհաննէս Մկրտիչ։

Գալու բարկութիւնը և ապաշխարութիւն մեղաց թողութեան համար։ Մատ. Գ. 7—10, Մար. Ա. 4, Ղուկ. Գ. 7—9,

Ի՞նչ էր Յովհաննու Մկրտչի հանդերձն և կերակուրը։

Յովհաննէս ունէր հանդերձ ուղտի մազէ և իւր մէջքը մաշկեղէն գօտի. իւր կերակուրն էր մարախ և վայրենի մեղր։ Մատ. Գ. 4, Մար. Ա. 6։

Յովհաննէս Մկրտիչ ո՞ւր կը քարոզէր։

Հրէաստանի անապատին մէջ։

Շատեր կ՚երթայի՞ն լսել անոր քարոզը։

Այո։ Մատ. Գ. 5, Մար. Ա. 5։

Ի՞նչ կ՚ընէին լսելով Յովհաննու Մկրտչի քարոզութիւնը։

Կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ, խոստովանելով իրենց մեղքերը։ Մար. Ա. 5, Մատ. Գ. 6։

Երբ Քրիստոս մկրտուեցաւ Յովհաննէս Մկրտչէն, ի՞նչ պատահեցաւ։

Աստուծոյ Հոգին իջաւ անոր վրայ նման աղաւնւոյ, և ահա երկինքէն ձայն մը եկաւ որ կ՚ըսէր, Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւներ եմ։ Մատ. Գ. 16, 17։

Ի՞նչ ըսաւ Յովհաննէս երբ տեսաւ Յիսուսը որ իրեն կու գար։

Ահա Աստուծոյ Գառը՝ որ աշխարհի մեղքը կը վերցընէ։ Յովհ. Ա. 29, 36։



Յովհաննէս Մկրտիչ ի՞նչպէս մեռաւ։

Հերովդէս Թագաւորը գլխատեց զնա։ Մատ. ԺԴ. 1—11։

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏՔ

Աստուած ի՞նչպէս կը նայի մեղաւորին։

Աստուած մեղաւորին ամէն օր բարկացած է։ Սաղ. Է. 11։

Մեղաւորին համար ի՞նչ վճիռ կայ։

Այն անձը որ մեղք կը գործէ՝ անիկա պիտի մեռնի։ Եզեկ. ԺԸ. 4։

Աստուած կ՚ուզէ՞ մեղաւորին մահը։

Ոչ։ Ես կենդանի եմ, կ՚ըսէ Տէր Եհովան, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր։ Եզեկ. ԼԳ. 11։

Աստուած ի՞նչ կ՚ըսէ մեղաւորներուն։

Դարձէք, դարձէք ձեր չար ճամբաներէն, վասն զի ինչո՞ւ մեռնիք։ Եզեկ. ԼԳ. 11։

Ուրեմն Աստուած կ՚ատէ՞ մեղաւորները։

Ոչ. վասն զի Քրիստոս եկաւ փրկել զմեղաւորս։ Ա Տիմ. Ա. 15։

Աստուած ինչո՞ւ կ՚ատէ մեղքը։

Վասն զի ինքն է սուրբ և մեղքը գարշելի։ Սաղ. ԽԵ. 7, Բ Օր. Է. 25։

Մեղաւորք ի՞նչպէս կը նկատեն զԱստուած։

Երկիւղիւ, և չեն սիրեր զնա։ Ծն. Գ. 10, Հռովմ. Ը. 7, Ղուկ. Ե. 8։

Ի՞նչ տեսակ սիրտ ունինք մենք բնութեամբ։

Մեղանչող կամ չար սիրտ։ Սաղ. ԾԱ. 5, Եփես. Բ. 3։

Կրնա՞յ մէկը երկինք երթալ այդ չար սրտով։

Ոչ. մեր սիրտերը պարտին փոխուիլ նախ որ յարմարին երկնից։ Յովհ. Գ. 3։

Դուն ինքնիդ կրնա՞ս փոխել քու չար սիրտդ։

Ոչ. ես չեմ կրնար փոխել սիրտս։ Երեմ. ԺԳ. 23, Յովհ. Գ. 3։

Ո՞վ կրնայ փոխել մեղաւորին սիրտը։

Միայն Սուրբ Հոգին։ Յովհ. Գ. 5, ԺԴ. 26, Գործ. ԺԶ. 14։

Որո՞նք պիտի փրկուին և երթան երկինք։

Միայն անոնք որ կ'ապաշխարեն իրենց մեղքերէն և կը հաւատան Քրիստոսի։ Ղուկ. ԺԳ. 3, Գործ. Բ. 38, ԺԶ. 31, Գաղ. Բ. 16։

Ի՞նչ է ապաշխարութիւնը։

Ցաւիլ մեղաց համար և ատել և թողուլ զայն։ Սաղ. ԾԱ.։

Կրնա՞ս ապաշխարել և հաւատալ Քրիստոսի բուն քու զօրութենամբդ։

Ոչ. չեմ կրնար ընել բարի բան մը առանց Աստուծոյ Սուրբ Հոգւոյն օգնութեան։ Եփես. Բ. 8։

Ինչպէ՞ս կրնանք ստանալ Սուրբ Հոգւոյն օգնութիւնը։

Աստուած կ'ըսէ թէ ինքը պիտի տայ Սուրբ Հոգին ամէն խնդրողի։ Ղուկ. ԺԱ. 13։



Պէ՞տք է որ փոքր տղայք ալ խնդրեն Սուրբ Հոգին։

Այո. նա կ'ըսէ. Զիս կանուխ փնտռողները զիս կը գտնեն։ Առակ. Ը. 17։

Ի՞նչ ընել պէտք է որ փրկուինք։

Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի, և պիտի փրկուիս։ Գործ. ԺԶ. 31, Յովհ. Գ. 16, Զ. 29, Գործ. Դ. 12, ԺԳ. 38, 39։

Քրիստոսի հաւատալը ի՞նչ է։

Միայն Քրիստոսի ապաւինիլ փրկութեան համար։ Գործ. Դ. 12։

Յիսուսի հաւատալը ի՞նչ կը կոչուի։

Հաւատք ի Տէր Յիսուս։ Եփես. Բ. 8, Մատ. Ը. 10։

Ի՞նչպէս պարտիմ հաւատալ Քրիստոսի։

Բոլոր սրտով։ Հռովմ. Ժ. 9, Գործ. Ը. 37։

Ի՞նչ ըսուած է Քրիստոսի չհաւատացողներուն վրայ։

Ըսուած է թէ արդէն դատապարտուած են։ Յովհ. Գ. 18, 36։

Ի՞նչ կ'ըլլան մեր մեղքերը երբ հաւատանք Քրիստոսի։

Կը ներուին։ Մատ. Թ. 2, Ղուկ. Է. 20, Գործ. ԺԳ. 38, Եփես. Դ. 32։

Եթէ բոլոր սրտով հաւատանք Քրիստոսի, ի՞նչ կ'ընենք։

Կը դաւանինք զնա մեր բերանով։ Մատ. Ժ. 32, ԺԶ. 26։

Եթէ սիրենք զՅիսուս, ի՞նչպէս կը ցուցնենք։

Պահելով անոր պատուիրանները և սիրելով անոր ժողովուրդը։ Յովհ. ԺԴ. 15։ Ա. Յովհ. Գ. 14։

Ի՞նչ կը պահանջուի Քրիստոսի աշակերտներէն ։

Ուրանալ իրենց անձը, առնուլ իրենց խաչը և երթալ անոր ետևէն ։ Մատ. ԺԶ. 24 ։

## ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ

Ճշմարիտ հաւատքը մեզ կ՚առաջնորդէ՞ բարի գործերու ։

Այո ․ հաւատքը սիրով ի գործ կը դրուի ։ Գաղ. Ե. 6 ։

Հաւատքն ի՞նչ ընել կը կարողացունէ մեզ ։

Կը կարողացունէ զմեզ յաղթել աշխարհի ։ Ա Յովհ. Ե. 4, 5 ։

Հաւատքն ի՞նչ ազդեցութիւն կ՚ընէ մեր կենաց վրայ ։

Բարի գործեր ընել կու տայ մեզ ։ Յակ. Բ. 18 ։

Ի՞նչ են բարի գործերը ։

Գործեր որ հաճելի են Աստուծոյ ։ Եբր. ԺԱ. 6, Մատ. ԺԵ. 9 ։

Մեր գործերը պա՞րտին փառաւորել զԱստուած ։

Ինչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք ։ Ա Կոր. Ժ. 31 ։

Պիտի վարձատրուի՞ն բարի գործերը ։

Քրիստոս կ՚ըսէ, Ով որ միայն բաժակ մը պաղ ջուր կու տայ իր աշակերտաց միոյն, բնաւ պիտի չկորսնցունէ իր վարձքը ։ Մատ. Ժ. 42, ԻԵ. 34, 35, 40 ։



Ի՞նչ ըսուած է անգործ հաւատոյ վրայ ։

Հաւատքը թէ որ հետը գործ չունենայ՝ ըստ ինքեան մեռած է ։ Յակ. Բ. 17, 20, 26 ։

## ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ի՞նչպէս փրկուեցան այն անձինք որ ապրեցան յառաջ քան Քրիստոսի գալուստը ։

Հաւատալով Փրկչին որ պիտի գար ։ Յովհ. Ը. 36, Եբր. ԺԱ. 13 ։

Ի՞նչպէս ցուցուցին իրենց հաւատքն ի Քրիստոս ։

Աստուծոյ սեղանին վրայ զառնուկ մատուցանելով իբրև զոհ ։

Ի՞նչ կը ներկայացունէին այն զոհերը ։

ԶՔրիստոս, Աստուծոյ Գառը, որ եկաւ մեռնիլ մեղաւորաց համար ։ Ես. ԾԳ. 7, Յովհ. Ա. 29 ։

Ուրկէ՞ եկաւ Յիսուս Քրիստոս ։

Աստուծմէ եկաւ ։ Յովհ. ԺԶ. 27, 28, 30 ։

Ո՞ւր եկաւ ։

Աշխարհ եկաւ ։ Յովհ. Ա. 10, 11, Ա Տիմ. Ա. 15 ։

Ինչո՞ւ եկաւ ։

Եկաւ փնտռել և փրկել մեղաւորները ։ Ա Տիմ. Ա. 15, Ղուկ. ԺԹ. 10 ։

Ո՞վ է Տէր Յիսուս Քրիստոս ։

Աստուծոյ Որդին ։ Սաղ. Բ. 7, Գաղ. Դ. 4, Եբր. Ա. 2 ։

Ինչո՞ւ Տէր կը կոչուի ։

Վասն զի Աստուած է ։ Կող. Բ. 9, Ա Յովհ. Ե. 20, Փիլ. Բ. 6, Յովհ. Ա. 1, 14 ։

Նաև մարդ չէ՞ Քրիստոս ։

Այո․ Իւր վրայ առաւ մեր բնութիւնը ։ Փիլ. Բ. 7, Յովհ. Ա. 14 ։

Երբ մարդ եղաւ, դադրեցա՞ւ աստուածութենէն ։

Ոչ․ Նա էր Աստուած և մարդ միացեալ ։ Ա Տիմ. Գ. 16, Կող. Բ. 9 ։

Իսկական մա՞րդ էր մարմնով և հոգւով ։

Այո․ Իբրև մարդ փորձուեցաւ, չարչարուեցաւ և մեռաւ ։

Յոգնեցաւ, անօթեցաւ և ծարաւցա՞ւ իբրև մարդ ։

Այո․ Նաև լացաւ ։ Յովհ. Դ. 6, 7, Մատ. Ը. 24, Յովհ. ԺԱ. 35, Ղուկ. ԺԹ. 41 ։

Իւր անձի՞ն համար լացաւ ։

Ոչ․ ուրիշներու հետ և ուրիշներու համար ։

Ինչո՞ւ մարդ եղաւ Քրիստոս ։

Որպէս զի մեր բնութեամբ չարչարուէր և մեռնէր մեզի համար ։ Ա Պետ. Բ. 24 ։

Ի՞նչ մեծ խորհուրդ յայտնուեցաւ Քրիստոսով ։

Աստուած մարմնով յայտնուեցաւ ։ Ա Տիմ. Գ. 16, Յովհ. Ա. 14, ԺԴ. 9 ։

Երբ ծնաւ Քրիստոս, հովիւներուն ո՞վ հրատարակեց անոր ծնունդը ։

Տէրոջը հրեշտակը ։ Ղուկ. Բ. 9 ։

Ի՞նչ ըսաւ անոնց ։

Ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս



կու տամ, որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ ։

Աւետիսն ի՞նչ էր ։

Ձեզի այսօր փրկիչ մը ծնաւ, որ ինքը օծեալ Տէր է ։ Ղուկ. Բ. 11 ։

Յանկարծ ի՞նչ երգեցին երկնային զօրաց բազմութիւնք ։

Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն ։ Ղուկ. Բ. 13, 14 ։

Նախ ի՞նչ կերպով եկաւ Յիսուս ։

Իբրև փոքրիկ մանուկ ։ Ղուկ. Բ. 16 ։

Որմէ՞ ծնաւ Քրիստոս ։

Մարիամ կոյսէն ։ Մատ. Ա. 18, 23, Ես. Է. 14 ։

Ո՞ւր ծնաւ Քրիստոս ։

Ի Բեթղեհէմ ։ Ղուկ. Բ. 4 ։

Ո՞րչափ ապրեցաւ Յիսուս աշխարհի վրայ ։

Իբր երեսուն և երեք տարի ։

Ինչո՞ւ Տէր մեր կը կոչենք զՔրիստոս ։

Քանզի նա փրկեց զմեզ ։

Ինչո՞վ փրկեց զմեզ ։

Իւր արիւնովը ։ Եփես. Ա. 7, Գործ. Ի. 28, Կող. Ա. 14 ։

Ինչէ՞ փրկեց զմեզ ։

Մեր մեղքերէն և անոնց արդար պատիժէն ։

Ինչո՞ւ կոչուեցաւ նա Յիսուս ։

Քանզի նա կը փրկէ իւր ժողովուրդն իրենց մեղքերէն ։ Մատ. Ա. 21 ։

Կա՞յ ուրիշ Փրկիչ բաց ի Յիսուսէ։

Անկէ ի զատ ուրիշ անուն մը չկայ երկնից տակը մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու։ Գործ. Դ. 12։

Ինչո՞ւ Քրիստոս կոչուեցաւ։

Քանզի Աստուած օծեց զնա որ ըլլայ մեր մարգարէն, քահանան և թագաւորը։

Ի՞նչպէս մեր մարգարէն է Քրիստոս։

Աստուծոյ կամքը մեզ ուսուցանելով։

Ի՞նչպէս մեր քահանան է նա։

Մեր մեղաց համար մեռնելով և մեզի համար Աստուծոյ քով բարեխօս ըլլալով։ Եբր. Բ. 17, 18, Դ. 15, Է. 25։

Ի՞նչպէս մեր թագաւորն է նա։

Զմեզ կառավարելով և պահպանելով։ Ղուկ. Ա. 33։

Ինչո՞ւ կը կարօտինք Քրիստոսի իբրև մարգարէի։

Վասն զի տգէտ եմ։ Ղուկ. ԻԴ. 25, 27։

Ինչո՞ւ կը կարօտինք անոր իբրև քահանայի։

Քանզի յանցաւոր եմ։ Եբր. Դ. 15։

Ինչո՞ւ կը կարօտինք Քրիստոսի իբրև թագաւորի։

Քանզի տկար եմ և անօգնական։ Բ Կոր. ԺԲ. 9, 10, Փիլ. Դ. 13։

Տէր Յիսուս երբէք մեղք գործե՞ց։

Ոչ. Նա էր սուրբ, անմեղ և անարատ։ Եբր. Է. 26։

Ի՞նչ կ'ընէր Յիսուս երբ երկրի վրայ էր։

Կը շրջէր բարիք ընելով։ Գործ. Ժ. 38։



Ի՞նչ կեանք անցուց երկրի վրայ։

Աղքատութեան և չարչարանաց կեանք։ Մատ. Ը. 20։

Ի՞նչ տեսակ մահով մեռաւ։

Խաչին դժնդակ և ամօթալից մահով։

Գիտէ՞ր Յիսուս թէ պիտի խաչուէր։

Այո. ինքն ըսաւ իւր աշակերտներուն։ Մատ. ԺԶ. 21, ԺԷ. 22, Մար. Ժ. 34, Ղուկ. Թ. 22։

Ինչո՞ւ մեռաւ Քրիստոս։

Աստուծոյ արդարութիւնը գոհացունելու և մեր մեղքերը քաւելու համար։ Եբր. Թ. 22, 28, Ա Պետ. Բ. 24։

Ո՞վ մատնեց Յիսուսը։

Յուդա Իսկարիովտացին։

Յիսուս ի՞նչ եղաւ յետ մահուան։

Թաղուեցաւ։ Մատ. ԻԷ. 60։

Քրիստոս մեռեալ և թաղեալ մնա՞ց։

Ոչ. երրորդ օրն յարեաւ ի մեռելոց։

Ի՞նչ ըրաւ յետ յարութեան։

Շատ անգամ երևցաւ իւր աշակերտներուն և խօսեցաւ անոնց հետ։ Մատ. ԻԸ. 9, 17, Յովհ. Ի. 15, 19, 26, Գործ. Ա. 4։

Յետոյ ո՞ւր գնաց Քրիստոս։

Երկինք համբարձաւ։ Մար. ԺԶ. 19, Ղուկ. ԻԴ. 51, Գործ. Ա. 9։

Հիմա ո՞ւր է Քրիստոս։

Երկինքը, Աստուծոյ աջ կողմը։ Մար. ԺԶ. 19, Գործ. Գ. 21։

Ի՞նչ կը նշանակէ այս։

Ամէն իշխանութիւն ունի երկնից և երկրի մէջ։ Մատ. ԻԸ. 18, Եփես. Ա. 20, 21։

Այժմ ևս ունի՞ նոյն սէրը զոր ունէր երբ երկրի վրայ էր։

Այո. Նա նոյնն է երէկ ու այսօր և յաւիտեանս ։ Եբր. ԺԳ. 8 ։

Պա՞րտք Քրիստոս պաշտուիլ իբրեւ Աստուած ։

Բոլոր մարդիկ պարտին պատուել Որդին ինչպէս կը պատուեն Հայրը ։ Յովհ. Ե. 23, Փիլ. Բ. 6, Եբր. Ա. 6 ։

Տէր Յիսուս պիտի գա՞յ դարձեալ։

Այո. պիտի գայ դատել աշխարհ ։ Մատ. ԻԵ. 31։

Ե՞րբ պիտի գայ ։

Վերջին օրը, դատաստանին օրը։ Գործ. ԺԷ. 31, Ա Թեսս. Ե. 2։

Ի՞նչ ըրաւ Յիսուս, երբ փոքր տղայք բերուեցան անոր ։

Իւր բազկաց մէջ առաւ և օրհնեց զանոնք։ Մար. Ժ. 16։

Ի՞նչ ըսաւ փոքր տղայոց համար որ անոր կ'երթային ։

Թող տուէք առ մանր տղոցը, և մի արգիլէք զանոնք ինծի գալէն, ինչու որ երկնից թագաւորութիւնը անանկներունն է ։ Ղուկ. ԺԸ. 16 ։ Մատ. ԺԹ. 14 ։

Ի՞նչ կ'ըսէ Քրիստոս բոլոր բեռնաւորեալ մեղաւորաց ։

Եկէք ինծի, բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ պիտի հանգչեցընեմ։ Մատ. ԺԱ. 28 ։



Կրնա՞յ ամենայն ոք երթալ անոր ։

Այո. Նա կ'ըսէ, Ան որ ինծի կու գայ՝ բնաւ դուրս պիտի չհանեմ։ Յովհ. Զ. 37, Է. 37։

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Երբ Յիսուս պիտի զատուէր իւր աշակերտներէն, զո՞վ ղրկել խոստացաւ անոնց ։

Մխիթարիչը, Սուրբ Հոգին։ Յովհ. ԺԴ. 16, 26, ԺԵ. 26 ։

Ո՞վ է Սուրբ Հոգին։

Աստուածութեան երրորդ անձը։ Գործ. Ե. 3, 4 ։

Ո՞վ ներշնչեց մարգարէից և սուրբ մարդոց ի հնումն ։

Անոնք խօսեցան Սուրբ Հոգիէն շարժուած ։ Բ Պետ. Ա. 21.

Ի՞նչ մկրտութեան պիտի ընդունէին աշակերտք բաց ի ջրոյ մկրտութենէն ։

Պիտի մկրտուէին Սուրբ Հոգիով։ Գործ. Ա. 5 ։

Քրիստոս ի՞նչ ըսաւ Սուրբ Հոգւոյն համար ։

Ըսաւ թէ ձեր քովը կը բնակի և ձեր մէջը պիտի ըլլայ։ Յովհ. ԺԴ. 16, 17, Ա Կոր. Գ. 16։

Ո՞վ կու տայ ամէն հոգևոր պարգև ։

Սուրբ Հոգին ։ Ա Կոր. ԺԲ. 8, 11։

Ո՞վ կ'օգնէ մեզի մեր աղօթից մէջ։

Սուրբ Հոգին օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն ։ Հռովմ. Ը. 26 ։

Ի՞նչպէս կրնանք ստանալ Սուրբ Հոգւոյն օգնութիւնը։

Քրիստոս կ՚ըսէ, Եթէ դուք որ չար էք՝ ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, ո՜րչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն։ Ղուկ. ԺԱ. 13, Մատ. Է. 11։

Ուրեմն նախ ի՞նչ պարտիմ խնդրել Աստուծմէ։

Սուրբ Հոգին։

Ի՞նչ ըսուած է անոնց վրայ որ կը մերժեն զՔրիստոս։

Հոգւոյն Սրբոյ հակառակ կը կենաք։ Գործ. Է. 51։

Սուրբ Հոգւոյն նկատմամբ ի՞նչ յորդոր տրուած է մեզի։

Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրտմեցընէք, Հոգին մի մարէք։ Եփես. Դ. 30, Ա Թես. Ե. 19։

## ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՒԱԿՈՒՆՔ

Ի՞նչ ըսուած է անոնց համար որ Աստուծոյ Հոգիէն կ՚առաջնորդուին։

Անոնք Աստուծոյ որդիքն են։ Հռովմ. Ը. 14, Ա Յովհ. Գ. 1։

Ի՞նչպէս կ՚ըլլանք Աստուծոյ զաւակ։

Վերստին ծնանելով։ Յովհ. Գ. 3։

Ի՞նչպէս կրնանք վերստին ծնանիլ։

Պարտիմք ծնանիլ Սուրբ Հոգիէն։ Յովհ. Ա. 13, Գ. 5, 8։



Ի՞նչ հոգի կ՚ընդունին Աստուծոյ որդիք։

Որդեգրութեան Հոգին, որով կը կանչենք Աբբայ Հայր։ Հռովմ. Ը. 15։ Գաղ. Դ. 6։

Եթէ որդիք Աստուծոյ, ուրեմն ի՞նչ ենք։

Աստուծոյ ժառանգներ ու Քրիստոսի ժառանգակիցներ։ Հռովմ. Ը. 17։

Ի՞նչպէս կը պահպանուին Աստուծոյ որդիք։

Աստուծոյ զօրութեամբը, հաւատքով։ Ա Պետ. Ա. 5։

Ի՞նչ բանէ անցած է հաւատացեալն ի Քրիստոս։

Մահուանէ ի կեանս։ Յովհ. Ե. 24, Հռովմ. Ե. 21։

Ի՞նչ տեսակ կեանք ունի այն որ կը հաւատայ Աստուծոյ Որդւոյն։

Այն որ կը հաւատայ Աստուծոյ Որդւոյն՝ ունի յաւիտենական կեանք։ Յովհ. Գ. 16, 36, Զ. 47, Ժ. 28։

Ի՞նչ կը խոստանայ Քրիստոս անոր որ կը սիրէ զնա և կը պահէ անոր խօսքերը։

Հայրս և ես պիտի սիրենք զնա, և անոր պիտի գանք ու անոր քով օթևան պիտի ընենք։ Յովհ. ԺԴ. 21, 23։

## ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ կ՚ըսէ Քրիստոս իր և հաւատացելոց միութեան նկատմամբ։

Կ՚ըսէ թէ ինքը և անոնք մէկ են։ Յովհ. ԺԷ. 21, 23։

Ըսէ այն համարը ուր ինչ որ կ՚ընեն Քրիստոսի աշակերտաց՝ կ՚ընեն զայն Քրիստոսի։

Որովհետև աս իմ եղբայրներուս պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք։ Մատ. ԻԵ. 40, 45։

Քրիստոս ի՞նչ բանի նմանցուց զինքը և իր ժողովուրդը։

Ես որթն եմ, ըսաւ, և դուք ճիւղերն։ Յովհ. ԺԵ. 5։

Ճիւղը ուրկէ՞ կ՚առնու կեանք և զօրութիւն։

Որթէն։

Կրնա՞յ ուռը պտուղ բերել երբ կտրուած է որթէն։

Ոչ. պարտի որթին վրայ հաստատուած ըլլալ որ պտուղ բերէ։

Ի՞նչ կ՚ըսէ Քրիստոս պտուղ բերելու նկատմամբ, երբ իր վրայ չհաստատուին։

Նոյնպէս ալ դուք չէք կրնար, թէ որ իմ վրաս հաստատուած չըլլաք, ինչու որ առանց ինծի բան մը չէք կրնար ընել։ Յովհ. ԺԵ. 4, 5։

Ի՞նչ կը խոստանայ Քրիստոս երբ իր մէջ կենանք։

Թէ որ դուք իմ մէջս կենաք՝ և իմ խօսքերս ալ ձեր մէջը կենան, ինչ որ ուզէք՝ պիտի խնդրէք, ու պիտի ըլլայ ձեզի։ Յովհ. ԺԵ. 7։



Ի՞նչ կ՚ըսէ Սուրբ Գիրքը Քրիստոսի և իր ժողովրդեան մէկ մարմին ըլլալուն վրայ։

Արդ դուք Քրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս անոր անդամները։ Ա. Կոր. ԺԲ. 27, Զ. 15, Հռոմ. ԺԲ. 5։

Ի՞նչ նոր պատուիրան տուաւ Քրիստոս իր աշակերտաց։

Նոր պատուիրան մը կու տամ ձեզի որ մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի։ Յովհ. ԺԳ. 34, ԺԵ. 12, 17, Ա. Յովհ. Գ. 14։

Ո՞վ է այս մարմնոյն գլուխը։

Քրիստոս է գլուխը։ Եփես. Դ. 15, 16, Կող. Ա. 18։

Կրնա՞ն մեռնիլ Քրիստոսի մարմնոյն անդամք։

Ոչ. վասն զի կ՚ըսէ նա, Ես կենդանի եմ, և դուք կենդանի պիտի ըլլաք։ Յովհ. ԺԴ. 19։

---

## ԵԿԵՂԵՑԻՆ

Ի՞նչ է եկեղեցին։

Հաւաքում կամ ժողով։ Գործ. ԺԵ. 4, 30։

Ի՞նչ է Քրիստոսի եկեղեցին։

Քրիստոսի հաւատացողներու ժողով։ Գործ. Բ. 47, Հռոմ. ԺԶ. 5, Ա. Կոր. Ա. 2։

Աստուած միշտ ունեցա՞ծ է տեսանելի եկեղեցի երկրի վրայ։

Այո։

Ո՞վ է Եկեղեցւոյ մի միայն Գլուխը ։

Քրիստոս է Եկեղեցւոյ մի միայն Գլուխը ։ Կող. Ա. 18, Եփես. Ա. 22, 23 ։

Ի՞նչ ըսուած է հաւատացելոց մարմիններուն վրայ ։

Ձեր մարմինը կենդանի Աստուծոյ տաճար է ։ Ա Կոր. Գ. 16 ։

## ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Քանի՞ պատուիրան տուաւ Աստուած Սինա լեռնէն ։

Տասն ։ Ել. Ի. 1—17 ։

Ի՞նչ բանի վրայ գրեց Աստուած պատուիրանները ։

Երկու քարեղէն տախտակներու վրայ ։ Ել. ԻԴ. 12, ԼԱ. 18 ։

Ի՞նչ կ'ուսուցանեն մեզի առաջին չորս պատուիրանք ։

Մեր պարտքն առ Աստուած ։

Ի՞նչ կ'ուսուցանեն միւս վեց պատուիրանք ։

Մեր պարտքն առ ընկերս մեր ։

Ի՞նչ է տասն պատուիրանաց բովանդակութիւնը ։

Սիրել զԱստուած բոլոր սրտովս և ընկերս իբրև իմ անձս ։ Մատ. ԻԲ. 37, 39, Է. 12 ։

Ո՞վ է ընկերդ ։

Ամէն մարդ ։ Ղուկ. Ժ. 29—37 ։

Կրնա՞ս կատարելապէս սիրել զԱստուած և ընկերդ ։

Ոչ ։ Հռովմ. Ը. 7, Տիտ. Գ. 3 ։

Ի՞նչ կ'ըսէ Աստուած տասն պատուիրանաց սկիզբը ։

Ես եմ Եհովայ քու Աստուածդ՝ որ քեզ



Եգիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հանեցի ։ Ել. Ի. 2 ։

Ի՞նչ է առաջին պատուիրանը ։

Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս ։ Ել. Ի. 3 ։

Ի՞նչ կ'ուսուցանէ մեզի առաջին պատուիրանը ։

Ճանչնալ և պաշտել զԱստուած միայն ։ Մատ. Դ. 10 ։

Ի՞նչ է երկրորդ պատուիրանը ։

Դուն քեզի կուռք չշինես, ոչ ալ վերը երկնից մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպագութիւն չընես ու զանոնք չպաշտես. ինչու որ ես քու Տէր Աստուածդ Նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս. և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն ։ Ել. Ի. 4—6, ԻԳ. 24 ։

Ի՞նչ կ'արգիլէ երկրորդ պատուիրանը ։

Պատկերի երկրպագել ։ Բ Օր. Դ. 15—19 ։

Աստուած զինք ատողներուն չարութեան պատիժը կու տա՞յ նաև անոնց որդւոց ։

Այո. մինչև երրորդ և չորրորդ ազգը ։

Աստուած կ'ողորմի՞ անոնց որդւոց որ կը սիրեն զինքը և կը պահեն իր պատուիրանները ։

Այո. մինչև անոնց հազար ազգը ։

Ի՞նչ է երրորդ պատուիրանը։

Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնես. ինչու որ Տէրը իր անունը պարապ տեղը բերանը առնողը անմեղ պիտի չսեպէ։ Ել. Ի. 7։

Երրորդ պատուիրանն ի՞նչ կ'ուսուցանէ մեզի։

Յարգել կամ պատուել Աստուծոյ անունն և խօսքը։

Ի՞նչ կանոններ տրուած են մեզի երբ կ'երթանք Աստուծոյ տունը։

Երբոր Աստուծոյ տունը կ'երթաս, ոտքիդ զգուշութիւն ըրէ. և աւելի մտիկ ընելու մօտեցիր, քան թէ անմիտներուն զոհ մատուցանելու։ Ժող. Ե. 1, Մաղ. Ա. 13, Մատ. ԺԵ. 8,9։

Ի՞նչ է չորրորդ պատուիրանը։

Հանգստութեան օրը միտքդ բեր՝ անիկա սուրբ պահելու համար։ Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդ օրը Տէրոջը քու Աստուծոյդ հանգըստութեան օրն է. ան օրը գործ մը չգործես, ոչ դուն՝ ոչ քու որդիդ՝ ոչ քու աղջիկդ՝ քու ծառադ ու աղախինդ՝ ոչ քու անասունդ՝ ոչ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը, ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկա։ Ել. Ի. 8—11։



Չորրորդ պատուիրանն ի՞նչ կը պահանջէ մենէ։

Սուրբ պահել եօթներորդ օրը։

Ո՞ր օրն է Քրիստոնէից հանգստութեան օրը։

Շաբթուան առաջին օրը։ Գործ. Ի. 7, Ա Կոր. ԺԶ. 2, Յովհ. Ի. 19, 26։

Ինչո՞ւ եղաւ այս փոփոխութիւնը։

Քանզի այն օրն յարեաւ Քրիստոս ի մեռելոց։

Ի՞նչ կը կոչուի Քրիստոնէից հանգստեան օրը։

Տէրունական օր։ Յայտ. Ա. 10, Յովհ. Ի. 19, 26, Մատ. ԺԲ. 8։

Հանգստեան օրն ի՞նչ կը յիշեցունէ մեզի։

Մեր ստեղծումը և փրկութիւնը։ Ծն. Բ. 3, Ել. Ի. 11, Յովհ. Ի. 1։

Որո՞ւ համար սահմանուեցաւ շաբաթը կամ հանգըստեան օրը։

Շաբաթը մարդուն համար եղաւ։ Մար. Բ. 27։

Ինչպէ՞ս պէտք պահուի շաբաթը։

Պէտք հանգչինք աշխատութենէ և սուրբ պիտի պահենք այն օրը։ Ղեւ. ԺԹ. 30։

Աշխատող անասունք ալ պէտք ունի՞ն հանգստեան օրուան։

Այո։ Բ Օր. Ե. 14, Ել. ԻԳ. 12։

Շաբաթ օրերն ի՞նչ էր Յիսուսի սովորութիւնը։

Ժողովարան երթալ պաշտաման համար։ Ղուկ. Դ. 15, 16, ԺԳ. 10։

Այն օրը կրնա՞նք գործել հարկի և գթութեան գործեր։

Այո. օրինաւոր է շաբաթ օրը բարիք գործել։ Մատ. ԺԲ. 12, Մար. Գ. 4։

Ի՞նչ է հինգերորդ պատուիրանը։

Պատուէ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկար ըլլան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր Աստուածդ կու տայ քեզի։ Ել. Ի. 12։

Ի՞նչ կ'սորվեցնէ մեզի հինգերորդ պատուիրանը։

Պատուել և մեծարել հայրս և մայրս։

Ի՞նչ խոստում կցուած է այս պատուէրին։

Եթէ պատուենք մեր ծնողները, Աստուած պիտի օրհնէ զմեզ երկար կեանքով։ Եփես. Զ. 2, 3։

Ի՞նչ է վեցերորդ պատուիրանը։

Սպանութիւն մի ըներ։ Ել. Ի. 13։

Ի՞նչ կը պահանջէ վեցերորդ պատուիրանը։

Պահպանել մեր և ուրիշներուն կեանքը։ Առակ. ԻԴ. 11, 12, Գործ. ԺԶ. 28, Բ Օր. ԻԴ. 6։

Վեցերորդ պատուիրանն ի՞նչ կ'արգիլէ։

Կ'արգելէ ընել որ և իցէ բան որ վնասակար է մեզի կամ մեր ընկերին։

Սուրբ Գիրքն ի՞նչ կ'ըսէ անոր համար որ կ'ատէ իր եղբայրը։

Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան է։ Մատ. Ե. 22, Ա Յովհ. Գ. 15։



Քրիստոս ի՞նչ կ'ըսէ մեր թշնամեաց և մեզ ատողներուն նկատմամբ։

Պարտիմք սիրել զանոնք և աղօթել անոնց համար։ Մատ. Ե. 44, Հռովմ. ԺԲ. 14, 20։

Ի՞նչ է եօթներորդ պատուիրանը։

Շնութիւն մի ըներ։ Ել. Ի. 14։

Ի՞նչ կ'սորվեցնէ մեզի եօթներորդ պատուիրանը։

Մաքուր ըլլալ սրտով, լեզուով և վարքով։

Ի՞նչ է ութերորդ պատուիրանը։

Գողութիւն մի ըներ։ Ել. Ի. 15։

Ի՞նչ կ'սորվեցնէ մեզի ութերորդ պատուիրանը։

Հաւատարիմ և ժիր ըլլալ։ Ղեւ. ԺԹ. 13, Եփես. Դ. 28, Ա Թես. Դ. 6։

Ի՞նչ է իններորդ պատուիրանը։

Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ։ Ել. Ի. 16։

Ի՞նչ կ'սորվեցնէ մեզի իններորդ պատուիրանը։

Ճշմարտութիւնը խօսիլ սիրով։ Տիտ. Գ. 2։

Ի՞նչ կ'արգիլէ իններորդ պատուիրանը։

Սուտ խօսիլ և չարախօսութիւն ընել մեր ընկերին վրայ։ Ել. ԻԳ. 1, Սաղ. ԺԵ. 3, ՃԱ. 5, Յակ. Դ. 11, Եփես. Դ. 31։

Ո՞վ էին Անանիա և Սափիրա։

Այր և կին, որ ինկան մեռան Աստուծոյ սուտ խօսելով։ Գործ. Ե. 1, 4։

Ի՞նչ է տասներորդ պատուիրանը։

Քու դրացիիդ տանը մի ցանկար. քու դրացիիդ կնկանը՝ կամ անոր ծառային՝ կամ անոր

աղախինին՝ կամ անոր եզին՝ կամ անոր էշուն՝ և քու դրացիիդ ամենևին մէկ բանին մի ցանկար։ Ել. Ի. 17։

Ի՞նչ կ'ուսուցանէ մեզի տասներորդ պատուիրանը։

Գոհ ըլլալ մեր վիճակէն։ Եբր. ԺԳ. 5, Մատ. Զ. 25, 34, Փիլ. Դ. 11։

Ագահութիւնն ի՞նչ է, ի՞նչ կ'ըսէ Սուրբ Գիրքը։

Ագահութիւնը կռապաշտութիւն է։ Եփես. Ե. 5, Կող. Գ. 5։

Ուրիշ ի՞նչ պատուիրան տուաւ Քրիստոս իր աշակերտաց։

Սիրել զմիմեանս։ Յովհ. ԺԳ. 34, ԺԵ. 12, 17։

Կրնա՞յ մարդ կատարելապէս պահել տասն պատուիրանները։

Ոչ։ Հռովմ. Է. 18, 19, Գաղ. Գ. 10, 11։

Ի՞նչ կ'ըսուի անոր համար որ չը կատարէ տասն պատուիրանաց մին։

Պարտական է բոլոր պատուիրանաց։ Յակ. Բ. 10, 11, Գաղ. Գ. 10։

Ի՞նչ օգտակարութիւն ունին մեզի տասն պատուիրանները։

Կ'ուսուցանեն մեզի մեր պարտքը և կը ցուցնեն թէ կարօտ ենք փրկչի։ Գաղ. Գ. 24, Հռովմ. Ժ. 4։



## ԱՂՕԹՔ

Որո՞ւ պարտինք աղօթել։

Աստուծոյ միայն։ Ես. ԽԵ. 22, 23, Մատ. Դ. 10, Գործ. Ժ. 25, 26։

Ի՞նչ է աղօթքը։

Աղօթքն է խնդրել Աստուծմէ ինչ որ պէտք է մեզի։ Փիլ. Դ. 6։

Աստուած ըսա՞ծ է մեզի որ աղօթենք իրեն։

Այո. նա կ'ըսէ, խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի։ Մատ. Է. 7, ԻԱ. 22, Յովհ. ԺԶ. 24, Ղուկ. ԺԸ. 1։

Աստուած կը լսէ՞ մեր աղօթքը։

Այո. եթէ ի սրտէ աղօթենք։ Յովհ. Դ. 24, Հռովմ. Ը. 26, 27։

Միշտ կու տա՞յ Աստուած ինչ որ կը խնդրենք։

Այո. եթէ մեր օգտին համար է։ Ա Յովհ. Ե. 14, Մատ. Է. 11։

Մենք գիտե՞նք միշտ ինչ որ օգտակար է մեզի համար։

Ոչ. վասն որոյ պարտիմք Աստուծոյ թողուլ ընտրութիւնը։ Բ Կոր. ԺԲ. 8, 9։

Աստուած մեր բարի՞ ըլլալուն համար կը լսէ մեր աղօթքը։

Ոչ. քանզի մենք բարի չենք։

Որո՞ւ միջոցաւ պարտինք դիմել առ Աստուած։

Տէր Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբ։ Յովհ. ԺԴ. 6, Ա Տիմ. Բ. 5։

Որո՞ւ անունով պարտինք աղօթել։

Միայն Քրիստոսի անունով։ Յովհ. ԺԴ. 6, 13, 14, ԺԵ. 7, 16, ԺԶ. 23։

Ի՞նչ կը խոստանայ Քրիստոս անոնց որ իւր անունով կը խնդրեն Հօրմէն։

Իմ անունովս ինչ որ խնդրէք Հօրմէն, պիտի տայ ձեզի։ Յովհ. ԺԶ. 23, ԺԴ. 13, 14։

Ո՞ւր աղօթել կը պատուիրէ մեզի Քրիստոս։

Մտիր, կ՚ըսէ, քու ներքին սենեակդ ու դուռդ գոցէ, և աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի։ Մատ. Զ. 6։

Ի՞նչ կը խոստանայ Քրիստոս երբ երկու կամ երեք հոգի կ՚աղօթեն ի միասին։

Թէ որ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին՝ ամէն ինչ բանի համար որ խնդրեն, պիտի ըլլայ անոնց։ Մատ. ԺԸ. 19։

Ի՞նչ խոստում ունի Քրիստոս անոնց որ իւր անունով կը ժողվին։

Ուր որ, կ՚ըսէ, երկու կամ երեք հոգի ժողվուած ըլլան իմ անունովս, հոն եմ ես անոնց մէջը։ Մատ. ԺԸ. 20։

Ստէ՞պ պարտինք աղօթել։

Այո. պատուիրուած է մեզի անդադար աղօթել։ Ա Թես. Ե. 17, Ղուկ. ԺԸ. 1—7։

Ի՞նչ բան պարտինք ընել հետ մեր աղօթից։

Մեղաց խոստովանութիւն, և ընդունուած բարեաց համար շնորհակալութիւն։ Դան. Թ. 4, Փիլ. Դ. 6։



Պէ՞տք է որ ուրիշներուն համար աղօթենք։

Այո։ Ա Տիմ. Բ. 1, Գործ ԺԲ. 5, Եփես. Զ. 18, 19, Կող. Դ. 3։

Ո՞վ կ՚օգնէ մեզի մեր աղօթքներուն մէջ։

Սուրբ Հոգին։ Հռովմ. Ը. 26։

Ինչո՞ւ կը կարօտինք անոր օգնութեանը։

Քանզի ինչ բանի համար աղօթելու ենք ըստ արժանւոյն՝ չենք գիտեր։ Հռովմ. Ը. 26։

Աղօթքի ի՞նչ օրինակ տուած է մեզի Քրիստոս։

Տէրունական Աղօթքը։ Մատ. Զ. 9, Ղուկ. ԺԱ. 2։

Ըսէ Տէրունական Աղօթքը։

Ով Հայր մեր որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ՝ ինչպէս որ երկինքը անանկ ալ երկրիս վրայ. մեր ամէն աւուր հացը այսօր մեզի տուր. և մեզի ներէ մեր պարտքերը՝ ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն. ու մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ. ինչու որ քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս։ Ամէն։

Ի՞նչ կը խոստանայ Աստուած անոնց որ աշխարհէն կը զատուին և իրեն կը հետևին։

Ես ձեզի Հայր պիտի ըլլամ, ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝ կ՚ըսէ Ամենակալ Տէրը։ Բ Կոր. Զ. 18։

Ինչպէս կ'ըլլանք որդիք Աստուծոյ։

Անոր Հոգիէն ծնանելով։ Յովհ. Ա. 13, Գ. 5, Յակ. Ա. 18։

Ինչ կը խնդրենք երբ կ'ըսենք, Քու անունդ սուրբ ըլլայ։

Կը խնդրենք որ մենք և բոլոր մարդիկ պատուենք Աստուծոյ անունը։

Ինչ կը խնդրենք երբ կ'ըսենք, Քու թագաւորութիւնդ գայ։

Կը խնդրենք որ բոլոր աշխարհ հաւատայ Տէր Յիսուս Քրիստոսի։

Ինչ է Աստուծոյ թագաւորութիւնը։

Արդարութիւն և խաղաղութիւն ու խնդութիւն Հոգւով Սրբով։ Հռովմ. ԺԴ. 17։

Պիտի գա՞յ Քրիստոսի թագաւորութիւնը բոլոր աշխարհի վրայ։

Այո։ Սաղ. Բ. 7, 8, ՀԲ. 8, Դան. Է. 13, 14, Մատ. ԺԱ. 27։

Ինչ պիտի ըլլայ երբ Աստուծոյ թագաւորութիւնը գայ ամէն տեղ։

Բոլոր մարդիկ պիտի սիրեն զԱստուած և պիտի սիրեն զիրար։

Ինչ խոստացուած է անոնց որ կը խնդրեն նախ Աստուծոյ թագաւորութիւնը։

Աստուած պիտի տայ անոնց ամէն ինչ որ պէտք է։ Մատ. Զ. 33։

Քրիստոս իր թագաւորութիւնը տարածելու նպատակաւ ինչ պատուէր տուաւ աշակերտաց։

Գացէք բոլոր աշխարհ, ու աւետարանը



քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն։ Մար. ԺԶ. 15, Մատ. ԻԸ. 19, Հռովմ. Ժ. 14։

Ինչ կը խնդրենք երբ կ'ըսենք, Քու կամքդ ըլլայ ինչպէս որ երկինքը անանկ ալ երկրիս վրայ։

Կը խնդրենք որ մարդիկ երկրի վրայ ծառայեն Աստուծոյ, ինչպէս հրեշտակները կը ծառայեն երկինքը։ Սաղ. ՃԳ. 20, 21։

Մեր կամքին համար ինչ կ'աղօթենք։

Կ'աղօթենք որ ոչ թէ մեր կամքը, հապա Աստուծոյ կամքը ըլլայ։ Ղուկ. ԻԲ. 42։

Ինչ կը խնդրենք երբ կ'ըսենք, Մեր ամէն աւուր հացը այսօր մեզի տուր։

Կը խնդրենք որ Աստուած տայ մեզի ամէն օր ինչ որ պէտք է մեր մարմիններուն և հոգիներուն։ Մատ. Զ. 32, Յովհ. Զ. 32, 48։

Ինչ կը խնդրենք երբ կ'ըսենք, Մեզի ներէ մեր պարտքերը՝ ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն։

Կը խնդրենք որ Աստուած ներէ մեզի մեր մեղքերը Քրիստոսի համար։ Եփես. Ա. 7, Կող. Գ. 13։

Քրիստոս ինչ կ'ըսէ մեզի անոնց նկատմամբ որ մեզի պարտական են։

Երբոր աղօթքի կը կայնիք, ներեցէք թէ որ մէկուն դէմ բան մը ունիք։ Մար. ԺԱ. 25, Մատ. ԺԸ. 35։

Ինչ կ'ըսէ, եթէ չներենք։

Թէ որ դուք չէք ներեր, ձեր Հայրն ալ որ

երկինքն է՝ պիտի չներէ ձեր յանցանքները։ Մար. ԺԱ. 26, Մատ. ԺԸ. 35։

Ի՞նչ կը խնդրենք երբ կ'ըսենք, Մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ։

Կը խնդրենք որ Աստուած պահէ զմեզ մեղքէ, և ազատէ զմեզ չարէն, Սատանայէն։ Մատ. ԻԶ. 41, Եփես. Զ. 11, 18, Մատ. ԺԳ. 19։

Աստուծոյ զաւակունք մեղք կը գործե՞ն։

Այո. երբ իրենք իրենց ձգուին՝ կ'իյնան։ Ա. Կոր. Ժ. 12, Ղուկ. ԻԲ. 31։

Մեր մեղանչելու հակամիտութեանը մէջ ի՞նչ ընել պարտի։

Միշտ արթուն կենալ և աղօթել։ Մատ. ԻԶ. 41։

Ի՞նչ պատճառ յառաջ կը բերենք Տէրունական Աղօթքին վերջը։

Սա պատճառը թէ Աստուծոյ է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը։ Ա. Թես. Բ. 12, Յայտ. Դ. 11։

Ամէն ի՞նչ ըսել է։

Ըսել է թէ կը փափաքինք և վստահ ենք թէ ստուգիւ պիտի ըլլայ։ Սաղ. ՃԶ. 48, Յայտ. ԻԲ. 20։



## ՍՐԲԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՔ

Քանի՞ խորհուրդ կայ։

Երկու։

Ի՞նչ են։

Մկրտութիւն և Տէրունական Ընթրիք։

Ո՞վ հաստատեց զանոնք։

Տէր Յիսուս Քրիստոս։ Ղուկ. ԻԲ. 19, Մատ. ԻԶ. 26, ԻԸ. 19։

Ինչո՞ւ հաստատեց։

Որպէս զի անոնց միջոցաւ որոշուին իւր աշակերտք և զօրանան։

Ի՞նչ նշան կը գործածուի Մկրտութեան ժամանակ։

Ջուր, որով կը մկրտուի Քրիստոնեայն։ Գործ. Ժ. 47, Ը. 36։

Ի՞նչ կը ցուցնէ այս։

Թէ կը մաքրուինք մեղքէ Քրիստոսի արեամբ։ Ա. Յովհ. Ա. 7։

Որո՞յ անուամբ պէտք է մկրտուիլ։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Մատ. ԻԸ. 19։

Որո՞նք պէտք մկրտուին։

Հաւատացեալք ի Քրիստոս և նոցա զաւակունք։ Գործ. Ը. 37, ԺԶ. 33, Ա. Կոր. Ա. 16։

Մկրտութիւնս ի՞նչ ըլլալ կը պարտաւորէ զմեզ։

Քրիստոսի ճշմարիտ հետևող ըլլալ։ Գաղ. Գ, 27, Հռովմ. Զ. 4։

Ի՞նչ է Տէրունական ընթրիքը։

Հացէն ուտել և գինիէն խմել ի յիշատակ Քրիստոսի մահուան վասն մեր։ Ա Կոր. ԺԱ. 26։

Ե՞րբ սահմանեց Քրիստոս այս ընթրիքը։

Իր մատնուած գիշերը։ Մատ. ԻԶ. 26, 28, Ա Կոր. ԺԱ. 23։

Կտրուած հացն ի՞նչ կը ներկայացունէ։

Քրիստոսի մարմինը որ մեր մեղաց համար կտրուեցաւ։ Ա Կոր. ԺԱ. 24, Մատ. ԻԶ. 26։

Գինին ի՞նչ կը ներկայացունէ։

Քրիստոսի արիւնը որ թափուեցաւ մեր փրկութեան համար։ Եփես. Ա. 7, Ա Կոր. ԺԱ. 25։

## ՄԱՀ

Երբ մեր մարմինները մեռնին, ի՞նչ կ՚ըլլան։

Մեր մարմինք ի հող կը դառնան, և մեր հոգիք կ՚երթան հոգւոց աշխարհը։ Ծն. Գ. 19, Ղուկ. ԻԳ. 46, Գործ. Է. 59։

Երբեւէ հոգիք վերստին միացա՞ծ են մարմնոյ հետ յետ մահուան։

Այո. շատ հոգիներ։ Գ Թագ. ԺԷ. 21, 22, Դ Թագ. Դ. 32, 37, Ղուկ. Է. 15, Ը. 55, Յովհ. ԺԱ. 44։

Աւազակին ի՞նչ ըսաւ Քրիստոս խաչին վրայ։

Այսօր իմ հետս դրախտին մէջը պիտի ըլլաս։ Ղուկ. ԻԳ. 43։



Պօղոս ի՞նչ փափաք յայտնեց մահուան համար։

Ըսաւ թէ կը փափաքէր մեկնիլ և Քրիստոսի հետ ըլլալ։ Փիլ. Ա. 23։

Ո՞ւր է Քրիստոս։

Երկինքը։ Մար. ԺԶ. 19, Ղուկ. ԻԴ. 51, Գործ. Ա. 11, Է. 55։

Ուրեմն մահն ի՞նչ է Քրիստոնէին։

Մուտ յուրախութիւն յաւիտենական։ Բ. Կոր. Ե. 1, Ա Պետ. Ա. 4։

Սուրբ Գիրքն ի՞նչ կ՚ըսէ անոնց համար որ ի Տէր կը ննջեն։

Երանելի են այն մեռելները՝ որոնք Տէրոջմով կը ննջեն։ Յայտ. ԺԴ. 13։

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՑ

Մեր մարմինները պիտի ելլե՞ն նորէն։

Այո. վերջին օրը, յարութեան ժամանակ։ Փողը պիտի հնչուի, ու մեռելները յարութիւն պիտի առնեն։ Ա Կոր. ԺԵ. 52, Ա Թես. Դ. 16, Յովհ. Ե. 28, 29, Գործ. ԻԴ. 15։

Բոլոր գերեզմանի մէջ եղողները պիտի լսե՞ն անոր ձայնը։

Այո. ու դուրս պիտի գան։ Յովհ. Ե. 29, Գործ. ԻԴ. 15, Յայտ. Ի. 12։

Ի՞նչ տեսակ մարմին պիտի առնենան Քրիստոնեայք յայնժամ։

Փառաւոր, զօրաւոր և հոգեւոր մարմին։ Ա Կոր. ԺԵ. 42—44, Ա Յովհ. Գ. 2։

## ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ԿԱՄ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ՕՐԸ

Ո՞վ պիտի գայ վերջին օրը։

Տէր Յիսուս Քրիստոս պիտի իջնէ երկինքէն։ Ա. Թես. Դ. 16, Գործ. Ա. 11։

Որո՞նք պիտի ըլլան անոր հետ։

Բոլոր սուրբ հրեշտակները։ Մատ. ԻԵ. 31 Բ Թես. Ա. 7։

Ի՞նչ պաշտօնով պիտի գայ Քրիստոս։

Դատել զկենդանիս և զմեռեալս։ Ա. Պետ. Դ. 5, Գործ. Ժ. 42, ԺԷ. 31, Բ Տիմ. Դ. 1։ Եբր. Թ. 27։

Ի՞նչ բանի համար պիտի դատուինք դատաստանին օրը։

Մեր բոլոր խորհրդոց, բանից և գործոց հաշիւը։ Բ Կոր. Ե. 10, Մատ. ԺԶ. 27, ԺԲ. 36

Յայնժամ ի՞նչ պիտի ըլլան երկինք և երկիր։

Երկինքը սաստիկ շառաչիւնով պիտի անցնի ու տարերքները բռընկած պիտի լուծուին։ Բ Պետ. Գ. 7, 10, Ես. ԾԱ. 6, Մատ. ԻԴ. 35 Յայտ. Ի. 11։

Երկրի վրայ կենդանի մնացեալք ի՞նչ պիտի ըլլան դատաստանին օրը։

Յանկարծակի պիտի փոխուին։ Ա. Կոր. ԺԵ. 51, 52, Փիլ. Գ. 21։

Ամբարիշտները ի՞նչ պիտի ըլլան դատաստանին օրը։

Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան։ Սաղ. Թ. 17, Մատ. ԺԳ. 42։



Ի՞նչ է դժոխքը։

Զարհուրելի և անվախճան տանջանաց տեղ մը։ Մատ. ԻԵ. 41, 46, Ղուկ. ԺԶ. 26, Բ Թես. Ա. 9, Յայտ. ԺԴ. 11։

## ԵՐԿԻՆՔ

Ի՞նչ պիտի ըլլան Քրիստոսի հաւատացեալք դատաստանին օրը։

Երկինք պիտի փոխադրուին։ Մատ. ԻԵ. 34, ԺԳ. 43, Ա. Թես. Դ. 16։

Ի՞նչ է երկինքը։

Փառաւոր և երջանիկ տեղ մը, ուր արդարք պիտի ըլլան Տէրոջը հետ յաւիտեան։ Մատ. ԻԵ. 46, Բ Պետ. Գ. 13, Յայտ. Է. 15։

Ի՞նչ ըսուած է Աստուծոյ ներկայութեան մէջ ըլլալու վրայ։

Երեսիդ առջին լեցուն ուրախութիւն կայ, քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան։ Սաղ. ԺԶ. 11, Ա. Կոր. Բ. 9։

Ցաւ կամ մահ պիտի ըլլա՞յ երկնից մէջ։

Ոչ. Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ։ Յայտ. ԻԱ. 4, Է. 16, 17։

Առանց մեռնելու երկինք փոխադրուած մարդ կա՞յ։

Այո. Ենովք և Եղիա երկինք առնուեցան։ Ծն. Ե. 24, Դ Թագ. Բ. 11։

Պէտք ճանչնա՞նք զիրար հանդերձեալին մէջ։

Այո․ աւելի լաւ քան այժմ։ Ա Կոր. ԺԳ. 12։

Ընդարձա՞կ տեղ է երկինքը։

Այո․ Քրիստոս կ'ըսէ, Իմ Հօրս տունը շատ բնակարաններ կան։ Յովհ. ԺԴ. 2։

Շատ բնակիչներ պիտի գտնուի՞ն երկնից մէջ։

Այո․ մեծ բազմութիւն։ Յայտ. Է. 9։

Ուրկէ՞ պիտի գան։

Բոլոր ազգերէն։ Յայտ. Է. 9։ Ղուկ. ԺԳ. 29։

Զո՞վ պիտի փառաւորեն իրենց փրկութեան համար։

ԶԱստուած և Գառնուկը։ Յայտ. Է. 10։

Անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց, և մեզ թագաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու իր Հօրը, անոր փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։ Յայտ. Ա. 5, 6, Ե. 9, 10, 12, 13։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
И. ИМ. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

546
0026982
546
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0026982